



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



660

ՄԵԾ

ՃԵՂԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. 2.

142





Ա. Շ.

Ն 15  
Մ-55


268 0

142


# ՄԵԾ

## ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ



ՎԵՑԵՐՈՐԳ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ  
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ



ԱՌՅ ԹԻՒՆԱՆՆԻՄԵԱՆ

1960

معارف عمومیہ نصاب جلیہ سنک رخصتیلہ طبع اولنمشدر  
۱۰ ربیع الاخر ۳۰۴ و ۲۳ کانون اول ۳۰۲ نومرو ۹۷۴  
مصارفی آمریقان مینیونز شرکتی طرفندن تسوید اولنهرق

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ

1892



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ  
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ  
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

(89964-142)

142-2012  
ԿՔ142

	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ
---	-----------------------------------

(148-2  
81-97





# ՄԵԾ

## ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

---

### ԳԼՈՒԽ Ա

ՅԱԿՈՒ ՄԱՐԻԱՄ ԵՒ ԱՆՈՆՑ ՀԱՅՐԸ

Հայր մը և անոր երկու պզտիկ տղայք սովորութիւն ունէին ատեն ատեն արտերը մեկտեղ պտըտիլ, և հոն այլեւայլ բաներու վրայ խօսակցիլ: Տղոց մէկը, Յակոբ անուանով՝ մանչ մըն էր. միւսը աղջիկ էր, Մարիամ անուանով:

Երբ օր մը այսպէս արտերը կը պտըտէին, Հայրը յոգնեցաւ և մեծ ծառի մը շուքին տակ նստաւ, բայց տղայք չուզելով նստիլ՝ սկսան ասդին անդին շրջիլ, ծաղիկներ ժողվել և իրենց հօրը բերել: Ետքը տղայք ալ յոգնելով իրենց հօրը քով նստան, և անոր հարցուցին թէ իրենց բերած ծաղիկները գեղեցիկ չե՞ն:

“Շատ գեղեցիկ են”, ըսաւ հայրը, և շնորհակալ եղաւ անոնց ընծային համար:



Քիչ մը ետքը թռչուն մը անոնց քով կը թռչ-  
չըտէր : թռչունին փետուրները դեղին և մութ  
գոյն էին . թռած ժամանակը թռչունը կ'երգէր :  
Տղայք իրենց աչքերը տնկած անոր կը նայէին ,  
մինչեւ որ աներեւոյթ եղաւ :

Արտին մէջ քանի մը ոչխար , կովեր և ձիեր  
ալ կային , որոնք հանդարտաբար կ'արածէին :

Մինչ պզտիկ աղջիկն ու եղբայրը և անոնց հայ-  
րը այսպէս նստած կը խօսակցէին , թիթեռնիկ-  
ներ ալ եկան անոնց քով . բայց տղայք բնաւ  
չանք չըրին զանոնք բռնելու , ինչու որ այսպի-  
սի բան մ'ընել արգիլուած էր անոնց : Անոնք  
գոց ըրած էին նաեւ երգի մը սա խօսքերը .

«Պզտիկ ճանճ մընալ բնաւ , ես պիտի չմեռցընեմ .

Ինչու որ ցաւ կը քաշէ՝ երբ ես անոր վնասեմ » :

Արեւը շատ տաք էր , բայց Մարիամ և Յա-  
կոբ շուքին տակը նստած՝ տաքութիւնը չէին



զգար : կ'ուզէ՞ք դիտնալ թի-  
ինչ քանի վրայ խօսեցան .  
Երկրորդ գլուխը պիտի պատ-

մէ ձեզի

քանի

մը բան

որ հայ

րըն ա

նոնց ը

սաւ :



## ԳԼՈՒԽ Բ

## Ա Ս Տ ՈՒ Ծ Ո Յ


ՆԻ ԵՆՈՐ ԲԵՐԵՐԵՐՈՒԹԻՆԵՆԸ ԱՐԵՅ

« Աստուած շատ բարերար է, և միշտ կ'ուզէ մեզ երջանիկ ընել: Մեր ամէն օրուան կերակուրը տուողն Ան է. հագնելու հանդերձ և բնակելու տուն տուողն Ան է: Բան մը չունինք որ Ան տուած չըլլայ մեզի, ոչ ալ զուարճութիւն մը՝ որ մեզի համար Ան պատրաստած չըլլայ: »

Աստուած է որ արեւը կը ծագեցընէ՝ մեզ տաքցընելու համար: Անիկա մեզի կարողութիւն կուտայ դաշտերը պտըտիլ, և մեր շուրջը եղած զուարճալի տեսարանները վայելել: Մենք կը սիրենք գեղեցիկ ծաղիկներ տեսնել, որոնց արարիչն Աստուած է:

Կը սիրենք թռչուններուն քաղցր ձայնը լսել. ասոնք ալ Աստուած ստեղծեց մեր զուարճութեանը համար: Մեր պարտիզին մէջ տնկուած ծառերուն անոյշ պտուղները կը վայելենք, բայց բնաւ մոռնալու չենք թէ այս պտուղներն ալ Աստուծմէ տրուած են մեզի:


Եթէ Անիկա պտուղ, ծաղիկ և թռչուն տուած չըլլար մեզի, թէեւ կրնայինք ապրիլ, բայց մեր զուարճութիւնը պակաս պիտի ըլլար:





Աստուած բարերար է բոլոր կենդանի արարածներուն : Այս կովերը, ոչխարները և ճիւղերը, որ հիմա մեր առջեւն են, Աստուծոյ սուած կեանքը կը վայելեն : Աստուած կը հողայ թրուշուններն և ճճիները . եթէ Ան չպահէ և չկերակրէ զանոնք, ամէնքն ալ կը մեռնին : Աստուած զինքը սիրողները կը սիրէ, և բարերար է չարերուն անգամ : Չարերուն վայելած ամէն բարիքը սուտողն Աստուած է : Ան կը խորհի անոնց վրայ, թէպէտ անոնք Աստուծոյ վրայ չեն խորհիր :

Շատ անգամ Աստուծոյ վրայ խորհինք, շնորհակալ ըլլանք Անոր մարդասիրութեանը համար, և օգնութիւն խնդրենք Անկէ՝ որ սիրով Անոր հնազանդինք” :



## ԳԼՈՒԽ Գ

### ԾԱՂԻԿԸ

ԵՒ ԵՆՈՐ ՍԵՐՄԸ

Քանի որ ծառին տակը նստած էին, հայրը տղոց բերած ծաղիկներէն հատ մ'առաւ, և հարցուց անոնց, « Այսպիսի ծաղիկ մը կրնա՞ք շինել » :

« Ոչ », պատասխանեց Մարիամ, « չենք կրնար » :



Աշխարհիս մէջ չկայ մէկը, որ կարող է այսպիսի ծաղիկ մը շինել” :

“ Ուստի՞ գիտես, Մարիամ” , ըսաւ հայրը :

– “ Աղէկ գիտեմ, քանզի տեսած եմ թէ ծաղիկները սերմերէ կը բուսին : Դուն անգամ մը քանի մը սերմ տուիր ինծի իմ պարտիզիս համար, և օգնեցիր ինծի զանոնք ցանելու, և հիմա անոնք ծաղիկներ եղան” :

– “ Ուրեմն կրնա՞ս ըսել ինծի թէ սերմերը ուստի՞ կ’ըլլան” :

“ Անոնք դուն ծախու առիր, այնպէս չէ՞, հայրիկ,” հարցուց Յակոբ :

“ Այո”, ըսաւ հայրը, “ բայց սերմն ո՞վ շինեց” :

Մարիամ պատասխան մը չէր կրնար տալ : Ուստի հօրմէն խնդրեց որ սերմերուն ուստի ըլլալն անոնց հասկըցընէ :

Անատեն հայրը թուումած ծաղիկ մ’առաւ, և անոր քանի մը թերթը փրցընելով, ծաղկին մէջ սերմերուն պահուած տեղը ցուցուց և ըսաւ, “ Երբ ծաղիկները սկսին թուալիլ, սերմերը շարունակ կը մեծնան և կը հասնին, մինչեւ որ ժողովուին կամ գետին իյնան : Ուրեմն կը տեսնէ՞ք” , ըսաւ, “ որ թէեւ ծաղիկները սերմերէն կ’ելլեն, սակայն առաջ սերմերը ծաղիկներէն ելած են : Հիմա կրնա՞ք ինծի ըսել թէ ամենէն առջի սերմերն աշխարհիս մէջ ի՞նչպէս գըտնուեցան” :

“ Կարծեմ թէ զանոնք Աստուած ստեղծած



ըլլալու է” , պատասխանեց պզտիկ աղջիկը :

“ Այո , այդպէս է” , ըսաւ հայրը . “ եթէ ինծի մտիկ կ’ընէք , ձեզի կը խօսիմ ատոր վրայով ” : Ուստի խօսքը շարունակելով ըսաւ ,

“ Ժամանակաւ ոչ աշխարհ կար , ոչ արեւ , ոչ լուսին և ոչ ալ աստղ : Այն ժամանակն ասկէ շատ առաջ էր” :

“ Քսա<sup>ո</sup>ն տարի առաջ” , հարցուց Յակոբ :

Յակոբ չորս տարեկան պզտիկ մանչ մըն էր , և կը կարծէր թէ մէկ տարի երկայն ժամանակ է . մինչեւ քսան համրել գիտէր , և իր խելքովը կը կարծէր թէ քսան տարին չափազանց երկար ժամանակ է :

Այս գրքոյկը կարդացողները կրնան լաւ հասկընալ թէ այս տղան խելացի կամ գիտուն չէր :

Այս հարցումը ընելուն համար հայրը Յակոբայ վրայ չինդաց , բայց ըսաւ “ Քսան տարիէն աւելի է , հարիւր անգամ քսան տարիէն ալ աւելի է :

Այն ժամանակ թէև աշխարհս չկար , բայց Աստուած կար , և Անոր հաճոյ թուեցաւ աշխարհ մը ստեղծել” :



ԳԼՈՒԽ Դ

Ա Ս Տ ՈՒ Ա Ծ

ԱՄՈՒՆ ԻՆՆ ԱՏԵՂԾԵՑ



Ա. Ղ  
 Խաարհս  
 շինե լու  
 համար  
 նիւթ  
 չկար,  
 բայց  
 Աստ  
 ուած

զանիկա ոչինչէն ստեղծեց,  
 նաեւ ցորեկը ծագող արևը, և գի-  
 շերը ծագող լուսինն ու աստղերն  
 ալ ստեղծեց: – Աստուած մարդն  
 ալ ստեղծեց, որ աշխարհի մէջ  
 բնակի, ու նաեւ ամէն տեսակ ա-  
 նասուններ, թռչուններ և ճճիներ:  
 Ստեղծեց նաեւ այն մեծ ծովն, որուն  
 մէջ անթիւ ձուկեր կը գտնուին:

Բայց կենդանի արարածները չըս-  
 տեղծած՝ Աստուած անոնց համար աշ-  
 խարհս պատրաստած էր, ծառերն և տունկերն  
 ալ՝ անոնց օգտին ու գործածութեանը համար:



Երբ Աստուած ծառերը, տունկերը և ծաղիկները ստեղծեց, հրամայեց որ անոնք սերմ ունենան, որ ուրիշ ծառեր և տունկեր ելլեն անոնցմէ: Աստուծոյ մեծ զօրութենէն է որ սերմէն ծաղիկ կը բուսնի, ինչպէս որ դուք ալ ըսիք”:

“Այս քու յիշածներէդ զատ՝ Աստուած ուրիշ բան ալ ստեղծեց”, հարցուց Մարիամ:

“Աստուած ամէն բան ստեղծեց”, պատասխանեց հայրը: “Տեսած բաներէդ մէկը չկայ, որ Աստուած ստեղծած չէ”:

Ասկէ առաջ եղած բաներէն, կամ ներկայ բաներէն մէկը չկայ որ Ան ստեղծած չէ”:


“Բայց կարծեմ թէ իմ հանդերձներս, ասեղներս, գնդասեղներս (Քօփլ-) և մեր տունը, Աստուած չստեղծեց, այնպէս չէ՞ հայրիկ”, հարցուց աղջիկը:

– “Իմ աղջկանս հանդերձները զանազան բուսած բաներէ շինուած են, բայց Աստուած բուսցրնել տուաւ այս բաները: Գնդասեղները, ասեղները և շատ ուրիշ բաներ մարդիկ հողին մէջ եղած մետաղներէն (Տարէն) կը շինեն, բայց այն մետաղներն երկրիս մէջ Աստուած դրաւ: Մարդիկ փայտէ և քարէ տուներ կը շինեն, բայց փայտը և քարը ստեղծողը մարդը չէ, այլ Աստուած: Աստուած հաճեցաւ մեզի զօրութիւն և ճարտարութիւն տալ, իր ստեղծած բաները դործածելով՝ ուրիշ բաներ շինելու”:



սակայն որչափ որ գործենք կամ փոխենք զանոնք, անոնց բուն արարիչն Աստուած է: Գիտէ՞ք ինչ ըսել կ'ուզեմ":

Մարիամ և Յակոբ կը կարծէին թէ հօրը ըսածը կը հասկընային: Ես ալ այնպէս կը կարծեմ, ինչու որ թէ և անոնք պզտիկ էին, բայց ջանք կ'ընէին հասկընալ ինչ որ անոնց ծնողքը կը սորվեցընէին անոնց:



## ԳԼՈՒԽ Ե

### ԸՆԹԵՒՅՆԵՐՆԵՐ

Մարիամ, Յակոբ և անոնց հայրը ծառին տակ նստելով հանգչելէն ետքը ճամբայ ելան, և նեղ բայց զուարճալի փողոցէ մը անցնելով իրենց տունը գացին:

Երբ տունը մտան՝ Մարիամ և Յակոբ իրենց մօրը քով տղոց սենեակը գացին, հայրն ալ իր սենեակը երթալով՝ տղայք զանիկա կրկին չտեսան այն օրը, միայն թէ պառկելէն առաջ քիչ մը ժամանակ անոր գիրկը նստան:

Անկէ քանի մը օր ետքը՝ առտուանց հօրը սենեակին դուռը կամաց մը զարնուեցաւ, և հայրը ըսաւ, « Հրամմեցէ՛ք»: Սակայն ոչ ոք ներս մտաւ, և երբ հայրն ելաւ դուռը բա-



նալու, տեսաւ որ Յակոբ և Մարիամ հոն կայ-  
ներ էին, և կ'ուզէին ներս մտնել: «Կրնաք գալ»,  
ըսաւ հայրը, «եթէ գիր գրած ժամանակս լուռ  
և հանգիստ կենաք: Կրնա՞մ վստահիլ որ ձայն  
պիտի չհանէք»:

«Այո, հայր», ըսաւ Յակոբ, «եթէ մեզի  
պատկերազարդ գիրք մը տաս նայելու»:

Այն սենեակին մէջ շատ գրքեր կային սե-  
ղանին և դարակներուն (բաճ) վրայ շարուած,  
և տղայք գիտէին թէ անոնցմէ ոմանք պատ-  
կերազարդ են. քանզի շատ անգամ տեսած  
էին զանոնք: Վար նստան, և հայրը անոնց  
առջեւը սեղանի տեղ ցած աթոռ մը դնելով  
պատկերազարդ գիրք մը տուաւ անոնց:



## ԳԼՈՒԽ Զ

ՀՐԵՇՆԵՄԵՆԻՈՒՆ ԱՂԵՅ

«Հայր, շատ զբաղեալ ես», հարցուց Մա-  
րիամ ականջն 'ի վար՝ շատ մը պատկերներու  
նայելէն ետքը:

«Շատ զբաղեալ չեմ», պատասխանեց հայ-  
րը, «ի՞նչ կ'ուզես ինձի ըսել»:

— «Կ'աղաչեմ որ ըսես ինձի թէ այս պատկերը  
որո՞նն նմանութիւնն է: Ասիկա առաջուց տե-



սած չեմ : Կին մը կայ ճերմակ հանդերձով , և  
թռչնոյ պէս թեւեր ունի” :

“ Հրեշտակի պատկեր կը համարուի ատիկա” ,  
ըսաւ հայրը . “ բայց բնաւ չեմ կարծեր թէ  
հրեշտակներն այս պատկերին պէս են” :

“ Հրեշտակներն ի՞նչ են , մեզի կ’ըսե՞ս , հայ-  
րիկ” , ըսաւ Յակոբ :

– “ Անոնց վրայով քիչ մը կը խօսիմ ձեզի . բո-  
լոր գիտցածներս Աստուածաշունչէն սորված  
եմ : Կան հրեշտակներ որ սուրբ են , զորոնք  
Աստուած ստեղծեց իրեն ծառայելու համար :

Աշխարհ և մարդիկ ստեղծուելէն առաջ Աս-  
տուած հրեշտակները ստեղծեց :

Անոնք մեզի պէս չեն , և մեր մարմնոյն պէս  
մարմին չունին : Անոնք երկինքը կը բնակին ,  
և կը սիրեն զիրենք ստեղծող մեծ և սուրբ Աս-  
տուծոյն ծառայել :

Աստուծոյ հրամայած տեղն երթալու և Անոր  
պատուէրները կատարելու՝ շատ արագաշարժ  
և զօրաւոր են , շատ ալ խելացի են Աստուծոյ  
կամքն իմանալու : Բոլոր իրենց զօրութիւնը և  
իմաստութիւնը Աստուծմէ առած են : Առանց  
Աստուծոյ բան մը չեն կրնար ընել :

Մեր աչքերը հոգիներ տեսնելու համար  
ստեղծուած չեն . ուստի մենք հրեշտակները չենք  
կրնար տեսնել , քանզի անոնք հոգի են : Ատենօք  
Աստուած հաճեցաւ իր կամքը մարդոց յայտնել  
հրեշտակներու միջոցաւ , ուստի և հրեշտակները



մարմին առին և մարդու կերպարանքով երեւ-  
 ցան մարդոց : թէ և մենք չենք կրնար զանոնք  
 տեսնել , բայց անոնք կրնան մեզ տեսնել : Մենք  
 չենք գիտեր թէ որչափ անգամ հրեշտակները  
 մեզ կը տեսնեն , կամ թէ քանի հատ կայ մեր  
 շուրջը , ամէն օր և ամէն գիշեր : Բայց միայն  
 սա գիտենք թէ Աստուծոյ աչքը միշտ մեր  
 վրայ է : Ասիկա բնաւ մոռնալու չենք : Հրեշ-  
 տակներուն թիւը չենք գիտեր , անոնց թիւը  
 մեր խելքէն մտքէն չատ վեր է : Ամէնքն ալ  
 Աստուծոյ կ'սպասեն Անոր կամքն ընելու , Անոր  
 հրամանովը կ'երթան կ'ուզան : Երջանիկ են ,  
 քանզի սուրբ են : Հրեշտակներ ալ կան , որ եր-  
 կինքը չեն , երջանիկ ալ չեն , վասն զի սուրբ չեն :  
 Եթէ Աստուծոյ հնազանդ ըլլանք , մենք ալ  
 երջանիկ պիտի ըլլանք . եթէ Անոր կամքը կա-  
 տարենք երկրիս վրայ , հանդերձեալ աշխար-  
 հին մէջ Աստուծոյ սուրբ հրեշտակները պիտի  
 տեսնենք , և անոնց հետ երկինքը պիտի բնա-  
 կինք :





## ԳԼՈՒԽ Է

## ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻՆ ՄԷՁ ԵՂԱԾ

ՈՒՐԻՇ, ԽՕՍԻՆԵՐԸ

Յակոբ և Մարիամ իրենց հօրը շատ հարցումներ ըրին, որոնց անիկա կարող չէր պատասխան տալ :

Պզտիկ տղու մը դիւրին է այնպիսի հարցումներ ընել, որ իմաստուն ծնողք մը անգամ չի կրնար պատասխանել անոնց : Մարիամ հարցուց թէ « Հրեշտակները ո՞րչափ մեծ են, կըրնա՞ն ըսել ինձի, հայրիկ » :

« Ոչ, չեմ կրնար ըսել », պատասխանեց հայրը :  
« Հիմա այս սենեակին մէջ հրեշտակ կա՞յ », հարցուց Յակոբ :

« Իրաւ է, տղաս », ըսաւ հայրը, « որ այդ հարցմանդ կարող չեմ պատասխանել » :

Անատեն Մարիամ ուրիշ բան մ'ալ հարցուց, իսկ հայրը դարձեալ պատասխանեց, « Սիրելի աղջիկս, իրաւ չեմ գիտեր » :

— « Բայց, հայրիկ, ես կը կարծէի թէ դուք ամէն բանի վրայով տեղեկութիւն ունիք : Ինչո՞ւ համար չեմ գիտեր կ'ըսէք » :

— « Վասն զի պէտք է որ ճշմարիտն ըսեմ : Քիչ մը բան գիտեմ. բայց շատ բաներ կան, որոնց վրայով ամենեւին բան մը չեմ գիտեր » :



“ Գու բոլոր գիրքերդ շինողը քենէ աւելի  
բան գիտնալու է” , ըսաւ Յակոբ :

“ Մէկ մարդ չէ բոլոր աս գիրքերը գրողը” ,  
պատասխանեց հայրը , “ այլեւայլ մարդոց  
գրածներն են ասոնք” :

“ Քանի՞ մարդ գրած է այս սենեակին գիր-  
քերը” , հարցուց Յակոբ .

– “ Դարձեալ կ’ըսեմ , չեմ գիտեր” .

“ Հայրիկ” , ըսաւ աղջիկը շփոթած , “ որչափ  
ստէպ չեմ գիտեր կ’ըսես այս առտու” :

– “ Սիրելի տղաքս , ուրիշ բան չեմ կրնար  
ըսել : Պէտք է որ պատասխան տամ երբ ինծի  
բան մը կը հարցընէք : Պատասխան չտալ պաղ  
բան մը պիտի ըլլայ : Սակայն ձեր այդպիսի  
հարցումներուն ուրիշ պատասխան չեմ կրնար  
տալ , բայց միայն իմացընել թէ չեմ գիտեր ,  
կամ թէ՛ չեմ կրնար ըսել : Սակայն եթէ քանի  
մը ըսէ լռիկ կենաք , գիտցած բաներէս մէկ  
քանին կ’ըսեմ ձեզի , այնպիսի բաներ՝ զոր ես  
ալ կ’ուզեմ որ դուք գիտնաք” : Անատեն անոնք  
լուռ կեցան , և հայրը սկսաւ Աստուծոյ իմաս-  
տութեանը վրայ խօսիլ :





## ԳԼՈՒԽ Ը

ՄՍՏՈՒԾՈՅ ԻՄՄՍՏՈՒԹԵԼՆԸ ԱՄԵՅ

« Ստուած իմաստուն է, ամէն բան գիտէ :  
 Մէկը չկայ որ կարող է անոր նոր բան մը իմա-  
 ցընել : Ստուած միշտ իմաստուն էր : Երբ ոչ  
 հրեշտակ կար, ոչ մարդ, ոչ արեւ, ոչ աստղ  
 և ոչ ալ աշխարհ, Ստուած գիտէր մարդոց  
 ամէն մէկը որ աշխարհիս վրայ պիտի բնակէր :  
 Ան գիտէ մեր բոլոր խօսքերը որ այսօր կը խօ-  
 սինք, կամ ասկէ առաջ խօսած ենք : Ստուած  
 տեղեակ է մեր ամէն խորհուրդներուն, նաեւ  
 անոնց որ առաջ խորհած ենք, և որ մեր կե-  
 նացը մէջ պիտի խորհինք : Ստուած այս աշ-  
 խարհս բնակող բոլոր մարդոց, կանանց և տը-  
 ղայոց ըրածները գիտէ : Ստուածոյ դժուար չէ  
 բոլոր այս բաները գիտնալ, և իմ պատմած-  
 ներէս կամ ձեր խօսածներէն շատ աւելի գիտ-  
 նալ, քանզի Ստուածոյ համար դժուար բան մը  
 չկայ :

Մենք միայն այն բաները գիտենք, զորոնք  
 սորված ենք, և մեր սորված բաները կամաց  
 կամաց կը սորվինք, բայց Ստուած ինք իրմէ  
 ամէն բան գիտէ, մէկը կարող չէ անոր բան մը  
 սորվեցընել :


Ձեզի ուրիշ բան մ'ալ պիտի ըսեմ զոր գիտ-



նալու էք : Աստուած հաճեցաւ իր Սուրբ Գրքին մէջ մեզի իմացընել թէ ինք պատրաստ է մեզ իմաստուն ընել , եթէ իրմէ խնդրենք : Սուրբ Գիրքը տուած է մեզի որ անկէ ճշմարիտ իմաստութիւնը սորվինք :

Երբ քիչ մը մեծնաք , պիտի սորվիք Աստուծոյ խօսքը կարդալ : Բայց պզտիկ տղայ մ'ալ , որ դեռ կարդալ սորված չէ , կրնայ Աստուծմէ իմաստութիւն խնդրել :

Աստուած բարի է , ինչպէս որ իմաստուն ալ է , և միշտ պատրաստ է ձեզի պէս պզտիկ տղայոց աղօթքները լսել” :



## ԳԼՈՒԽ Թ


### ԲԼՈՒՐՆ ՈՒ ՆՈՎԱԸ

Բարձր բլուր մը կար՝ որ ասոնց տունէն շատ հեռու չէր , և հայրն ու անոր տղաքը հոն երթալու ճամբուն մէջ պզտիկ փայտէ կամուրջէն անցնելով երբեմն երբեմն բլրոյն մինչեւ գագաթը կ'ելլէին :

Բլրոյն գագաթը քանի մը ծառեր կային , անոնց տակն ալ փայտէ նստարաններ : Բլուրը դալար խոտով և գոյնզգոյն ծաղիկներով ու բոյսերով ծածկուած էր : Բայց թէ տղոց և թէ



հօրն այն բլրոյն գագաթն ելլել ուզելուն բուն պատճառը ծովը տեսնել էր :



Ծովը բլրոյն անդիի կողմն էր : Ծովեզերքը շատ մօտ էր , ծովն ալ երբեմն եզերքին վրայ եղած աւազները կը ծածկէր , և բլրոյն ստորոտին կը զարնէր :

Բլրոյն ստորոտը՝ ծովէն քիչ մը հեռու տընակներ կային , որոնց մէջ ձկնորսներու ընտանիք կը բնակէին : Այս մարդիկը նաւակներ ունէին , որոնցմով ծովուն վրայ ելլելով ուռկաններով ձուկ կը բռնէին : Այս տղայոց հայրն այն ձկնորսներուն ծանօթ ըլլալով , երբեմն այն տընակները կ'երթար՝ հոն բնակող մարդոց հետ խօսելու : Մարիամ և Յակոբ ալ շատ անգամ անոր հետ գացած էին :

Ձկնորսներուն նաւակներէն զատ շատ անգամ ծովուն վրայ մեծ նաւեր ալ կ'անցնէին ,

ՀԱՅՍՍԱՆԻ

ԱԶԳԱՅԻՆ

ԳՐԱԴԱՐԱՆ



որոնց վրայով հայրը տղայոցը կը խօսէր իմացընելով թէ ինչ կարծիք ունէր այն նաւերուն ուր երթալուն կամ ուստի գալուն վրայով, և ուրիշ շատ բաներու վրայ կը խօսէր :

Կ'ուզէ՞ք իմանալ թէ ուրիշ ինչ բաներու վրայ խօսեցաւ : Հետեւեալ գլխու մէջ կը պատմեմ ձեզի :

## ԳԼՈՒԽ Ժ

ՄՍՏՈՒՆՕՒ ԵՄԻՆՆ ՏԵՂԷ

Յակոբ և Մարիամ ու անոնց հայրը բլրոյն գագաթը ծառերուն տակը եղած նստարանին վրայ նստած էին : Ծովը խաղաղ էր, քանզի շատ հով չկար զանիկա խռովելու : Արեգակը պայծառ կը փայլէր, և ծովը ապակիի կը նմանէր : Բաց ծովուն վրայ բարձր կայմերով և ճերմակ առագաստներով նաւ մը կար : Գեղեցիկ տեսարան մըն էր անոնց աչքերուն, ծովը, արեգակը, նաւը, բլրոյն ստորոտը եղած տնակները և ձկնորսները, որոնք իրենց ուռկանները կը նորոգէին : Բոլոր այս բաներուն նայելով Մարիամ և Յակոբ շատ ուրախացան :

Նախ՝ հայրն այն մարդոց վրայով խօսեցաւ որ գրեթէ միշտ նաւերու մէջ կը կենան, ուրիշ մարդոց վրայով ալ խօսեցաւ, որ հարիւրաւոր



և հազարաւոր մղոն հեռու երկիրներ կ'երթան ծովուն միւս կողմը . տղաքն ալ անոր խօսքերուն ուշի ուշով մտիկ կ'ընէին :

Ետքը հայրն անոնց ըսաւ , « Հեռաւոր երկիրներ բնակող մարդոցմէ ոմանք թուխ մորթ ունին , և ոմանք գրեթէ բոլորովին սեւ են , անհասկանալի օտար լեզուներ ալ կը խօսին , և այն երկիրներուն ծաղիկներն ու պտուղները մեր երկրին ծաղիկներէն և պտուղներէն շատ տարբեր են :

Բայց բան մը կայ” , ըսաւ , « որ ամէն տեղ մի և նոյն է” :


« Ի՞նչ է , հայրիկ” , հարցուց Մարիամ : Հայրը պատասխան տուաւ , « Ամէն տեղ Աստուած ներկայ է : Շատ ժամանակ պէտք է աշխարհիս ամենէն հեռու երկիրներն երթալու համար . բայց Աստուած հոն ալ է , ինչպէս որ հոս : Աշխարհիս մէջ շատ տեղ մեծամեծ անբնակ անտառներ կան , բայց Աստուած հոն ալ ներկայ է : Անիկա ամէն տեղ է” :

« Բայց Աստուած երկինքը չէ՞” , հարցուց Յակոբ :

– « Այո , երկինքն է , միշտ հոն է , բայց երկրիս վրայ ալ է . միշտ երկրիս վրայ : Աստուած միշտ մեր եղած տեղն է . մենք բնաւ մինակ չենք , քանզի Աստուած մեր հետն է , և մեր ըրածը , ըսածը և խորհածը գիտէ : Բնաւ մոռնալու չենք սա ճշմարտութիւնը թէ Աստուած



ամէն տեղ է, և վախնալու ենք անկէ արգել-  
լուած ինչ և իցէ բան մը ընելու, ըսելու կամ  
խորհելու”:



## ԳԼՈՒԽ ԺԱ

### ԿՈՒՌԻՅԸ

Մարիամու և Յակոբայ հայրն իր պզտիկ զաւ-  
կրներուն ծնած տանը մէջ շատ տարիներէ հե-  
տէ կը բնակէր:

Բայց ատենօք նաւով ճամբորդութիւն ըրած  
ըլլալով շատ անգամ իր տղոցը կը պատմէր  
այն երկիրներուն վրայով ուր գացած էր. Մա-  
րիամ և Յակոբ այս պատմութիւնները լսելէն  
երբէք չէին ձանձրանար:

“ Հիմա, հայրիկ”, ըսաւ Մարիամ, “ քու  
սենեակիդ մէջ գտնուած պաճուճապատանքին  
(պէպէ+) երկրպագողներուն վրայով կը պատմե՞ս  
մեզի”:

“ Այո, դարձեալ կը պատմեմ եթէ կ’ուզէք  
լսել”, պատասխանեց հայրը: “ Այն պզտիկ  
արձանը զոր դուք պաճուճապատանք կը կոչ-  
էք՝ հեթանոսները սպասած կը կոչեն: Աստուա-  
ծաշունչն անոր կողմէն անունը կուտայ: Մար-  
դուն մէկը, որ զանիկա իր խրճիթը դարանին





(ԵՖ) վրայ կը պահէր՝  
 ըսաւ ինծի թէ, զա-  
 նիկա հոն պահելուն  
 պատճառն այս էր,  
 որ կը յուսար թէ ա-  
 նոր միջոցաւ վտանդէ  
 պիտի պահպանուէր։  
 Այս մարդը սովորու-  
 թիւն ունէր այն  
 կուռքին հետ խօսե-  
 լու. անոր առջեւը կե-

րակուր և ծաղիկ կը դնէր. և երբ գետը կ'եր-  
 թար ձուկ բռնելու, խօսք կուտար այս իր  
 աստուածը աղէկ պատուել, եթէ ան իր ուռ-  
 կանը ձուկերով լեցընէ։ Բայց գիտէք թէ այդ  
 կուռքին պէս փայտի կտոր մը չի կրնար օգուտ  
 ընել, ոչ ալ օգուտ ընդունել, ինչու որ թէ և  
 մարդու պէս երեսի ձեւ, աչք, ականջ, բերան  
 և քիթ ունի, բայց չի կրնար ոչ տեսնել, ոչ  
 լսել, ոչ ալ համ կամ հոտ առնուլ։ Ուստի  
 օր մը խեղճ մարդը չկրնալով ձուկ բռնել, շատ  
 բարկացաւ իր կուռքին, և զանիկա մէկդի ձգեց՝  
 անկէ աղէկն առնելու համար։ Այսպէս այն  
 կուռքն իմ ձեռքս անցաւ”։

« Ի՞նչ յիմար մարդ է եղեր », ըսաւ Յակոբ։


« Շատ յիմար էր », պատասխանեց հայրը,

« և շատ ալ տղէտ, ուստի և խղճալու արժանի էր։

Ձինք և բոլոր աշխարհը ստեղծող ճշմարիտ



Աստուծոյ վրայ բնաւ տեղեկութիւն չունէր :  
Մենք ուրախանալու ենք որ Աստուածաշունչ  
ունինք , ան որ մեզի կը սորվեցընէ շատ գիտու-  
թիւն Աստուծոյ և անոր բոլոր գործերուն վրայ :  
Ուստի ըստ կարի ջանալու ենք Աստուածա-  
շունչը չունեցողներուն դրկել . աղօթք ալ ընե-  
լու ենք որ անոնք իրենց կուռքերէն դառնան՝  
ճշմարիտ և կենդանի Աստուծոյ ծառայելու” :



## ԳԼՈՒԽ ԺԲ

ԵՍՏՈՒՆՕ՝ ՍՈՒՐԻ ԵՒ ԵՐԻՆԵ Է

“ Ուրիշ բան մը կը պատմե՞ս մեզի , հայրիկ” ,  
ըսաւ Մարիամ :

“ Ի՞նչ բանի վրայով լսել կ’ուզես” , հարցուց  
հայրը :

– “ Այն կուսապաշտ մարդոց և անոնց կուռ-  
քերուն վրայով” :

– “ Շատ աղէկ , անոնց վրայ խօսիմ : Այն  
կուռքերու երկրպագողները չար մարդիկ են :  
Մէկզմէկ չեն սիրեր , զիրար կը խաբեն , իրա-  
րու սուտ կը զրուցեն , իրարմէ կը գողնան , և  
չատ անգամ ալ զիրար կը մեռցընեն : Անոնց  
պզտիկ տղաքներն անգամ շատ գէշութիւն կ’ը-  
նեն , և անոնց սորվեցընող չկայ , որ գիտնան  
բարի գործել :



Մնոնք կը կարծեն թէ չաստուածները չեն բարկանար երբ մարդիկ իրարու կը վնասեն, մանաւանդ թէ կը զուարճանան այնպիսի բաներ տեսնելով, և թէ այս չաստուածները կ'ուզեն բաժին ունենալ այն բաներէն զորոնք մարդիկ խաբէութեամբ և դողութեամբ ձեռք կը բերեն”:

« Ուրեմն անոնք շատ չար աստուածներ են”, ըսաւ պզտիկ աղջիկը:

« Եթէ այս տգէտ մարդոց իրենց աստուածներուն վրայով բոլոր պատմածները ճշմարիտ են, հարկաւ անոնք շատ չար ըլլալու են”, պատասխանեց հայրը: « Բայց շիտակն ըսելով անոնք աստուած չեն ամենեւին, միայն փայտի կամ քարի կամ հողի և կամ արծաթի կտորուանք են՝ զանազան ձեւով շինուած: Մարդիկ չար սիրտ ունենալով այսպիսի բաներու խելք կուտան, և կը կարծեն թէ աստուած մը չար բաներ կրնայ սիրել: Մենք աւելի աղէկ գիտենք քան թէ կուսակաշտները, բայց ոչ անոր համար որ 'ի բնէ բարի սիրտ ունինք: Ըսէք ինձի, տղաքս, ի՞նչ է պատճառը որ մենք կուսակաշտներէն աւելի աղէկ գիտութիւն ունինք”:

Տղաք կը կարծէին թէ աղէկ սորված ըլլալուն համար էր:

– « Բայց մենք աղէկ սորված պիտի չըլլայինք, եթէ Աստուածաշունչը մեզի առաջնորդ չունենայինք: Աստուածաշունչն է որ զմեզ ուրիշներէն աւելի իմաստուն կ'ընէ:



Աստուածաշունչն է որ մեզի կը սորվեցընէ թէ Աստուծոյ գործքերը, խօսքերն ու խորհուրդները բոլորն ալ սուրբ են . և թէ Ան սըրբութիւն կը սիրէ : Մեր Աստուածն արդար է բոլոր իր ճամբաներուն մէջ , և սուրբ է բոլոր իր գործքերուն մէջ” :



## ԳԼՈՒԽ ԺԳ

ՏՂՆՆ ՈՒ ՉԻՆ

« Հիմա պէտք է որ տուն դառնանք” , ըսաւ հայրը : « Նայեցէք՝ արեգակն ծածկուեցաւ ամպով , և շուտ մարը մտնելով աներեւոյթ պիտի ըլլայ . անատեն պառկելու ժամանակ պիտի ըլլայ բոլոր ձեզի պէս մանր տղոց համար” :

Ուստի Մարիամ և Յակոբ իրենց հօրը հետ բլրէն վար իջան տուն երթալու :

Ճամբան մեծ տղայ մը տեսան , որ ձիու մը առջեւն ինկած զանի կը տանէր : Ձին բեռնաւորուած կառք մը կը քաշէր :

Բեռը շատ ծանր ըլլալով ձին զայն դըժուարաւ կը քաշէր , թէեւ բոլոր ճիգը կը թափէր , ուստի և շատ կամաց առաջ կ’երթար : Ասոր համար տղան բարկացաւ , և շուտով երթալ ուզելով՝ ձեռքի մեծ դաւազանովը խեղճ ձին ծեծել սկսաւ :



Մերթ ոտքերուն կը զարնէր, մերթ գլխուն .  
 և զարկած ատենը շատ գէշ խօսքեր ալ կ'ըսէր :

Մարիամ գթած սիրտ ունենալով, այն ան-  
 գթութիւնները տեսնելու չէր դիմանար : Ար-  
 ցունք թափելով կ'ըսէր, « Այդ ի՞նչ գէշ տղայ  
 է, որ իր ձին այսպէս կը ծեծէ » : Հայրն ալ  
 նոյնպէս կը խորհէր, և քիչ մը կենալէն ետքը՝  
 դարձաւ և ըսաւ տղուն, « Չիուդ մի բարկանար,  
 և մի ծեծեր զանի, քանզի ան ըստ կարի կը  
 ջանայ իր բեռը քաշել » :

Տղան պատասխան չտուաւ, բայց ցուցուց թէ  
 կ'ամբշնար որ ուրիշները տեսան անոր անգը-  
 թութիւնը :

Անատեն հայրն իր դրպանէն (ճեռ) քանի մը  
 պղտիկ գիրք հանեց, և անոնց մէկը տղուն  
 տալով ըսաւ, « Ասիկա քուկդ ըլլայ, երբ ժա-  
 մանակ կ'ունենաս, կարդա . բայց խօսք տուր  
 ինձի որ ուրիշ անգամ ձիդ պիտի չծեծես » :

Տղան խօսք տուաւ . անատեն Մարիամ Յա-  
 կոր և հայրն անկէ զատուեցան դացին :





## ԳԼՈՒԽ ԺԴ

ՍՍՏՈՒՍԾ ԲԱՐԻ Է

ՉԱՐԵՐՈՒՆ ԵՆԳԵՄ

«Հայր, կարծեմ թէ չար է այն տղան, որ իր ձին այնպէս կը ծեծէ», ըսաւ պզտիկ Յակոբ. «եթէ ես ըլլայի քու տեղդ՝ անոր գիրք չէի տար» :

– «Թերեւս իմ տղաս անգամ չգիտեր թէ ըստ ժամանակին ինչ ընելու պարտական է : Մանաւանդ տղայք չեն կրնար դատել ինչ որ մեծ մարդիկ պիտի ընեն . այնպէս չէ՞, Մարիամ» :

«Այնպէս է, հայր», ըսաւ Մարիամ. «բայց այն անգութ տղուն ինչո՞ւ գիրք տուիր . պատճառը մեզի կ'ըսես» :

– «Սիրտը կակղցրնելու համար : Յոյս ունիմ թէ տեսնելով որ ես չբարկացայ, հապա միայն տրտմեցայ, թերեւս պիտի զղջայ իր անգութութեանը համար» :

Պզտիկ գիրքը զոր անոր տուի՝ անասունները չարչարելու վրայ է : Ինչպէս կը յուսամ, տղան այն գիրքը կարդալով, անկէ կրնայ սորվիլ թէ ուրիշ ժամանակ անասուններու հետ ինչպէս վարուելու է : Այն գիրքը պիտի սորվեցրնէ անոր թէ երբ մէկը անգութութիւն կ'ընէ,



ամենէն նուաստ արարածներուն անգամ, սուրբ  
 և մեծ Աստուծոյն անհաճոյ բան մը կ'ընէ, և  
 թէ որչափ զարմանալի է Աստուծոյ համբերու-  
 թիւնը: Աղէկ չէ՞ որ այն անգութ տղան սորվի  
 ասիկա, և զգաստանայ”:

“Այո, հայր”, պատասխանեցին երկու տղայք  
 միանգամայն:

– “Ուրեմն իմ ըրածս սաստելէ կամ ծեծելէ  
 աղէկ չէ՞ր”:

– “Ո՛հ, շատ աւելի աղէկ”:

– “Հիմա տան մօտեցանք, բայց մեծ ճշմար-  
 տութիւն մ'ալ կայ, և կ'ուզեմ որ այս գիշեր  
 պառկելէն առաջ դուք զայն սորվիք”:

Աստուած շատ ողորմած է մեզի: Մենք ա-  
 նոր երախտեաց մէկուն անգամ արժանի չենք:  
 Մենք ամէն օր զանիկա բարկացընող մեղքեր  
 այնքան կը դործենք, որ եթէ ինք բարերար և  
 ներող չըլլար, մենք մեր բոլոր զուարճու-  
 թիւնները կը կորսնցընէինք, և տրտմութենէ ու  
 ցաւէ զատ ուրիշ բան պիտի չմնար մեզի այս  
 աշխարհիս մէջ: Բայց Աստուած կ'ողորմի մեզի,  
 և այսպէս կը սորվեցընէ մեզի որ չարութիւն  
 ընողներուն ողորմինք:

Աստուածաշունչը կը սորվեցընէ մեզի ողոր-  
 մած ըլլալ, քանզի մեր երկնաւոր Հայրն ողոր-  
 մած է”:





## ԳԼՈՒԽ ԺԵ

ՍՈՒՐԻ ԳԻՐԻՅԸ

Առտու մը երբ այս տղայոց հայրն Աստուածաշունչը ձեռք առաւ կարդալու՝ Մարիամ անոր ըսաւ , « Հայր , այս առտու Յովսէփայ վրայով Սուրբ Գիրքէն կը կարդա՞մ մեզի » :

« Այո » , ըսաւ հայրը , « Եթէ հանդարտ նըստիք , Յովսէփայ պատմութեան մէկ մասը կը կարդամ » , և այնպէս ըրաւ : Հետեւեալ օրը նախաճաշկի ժամանակ Յակոբ իր հօրն ըսաւ , « Եթէ կամիս , Յովսէփայ վրայով դարձեալ կարդա այս առտու » . հայրն ալ այն պատմութեան ուրիշ մէկ մասը կարդաց , և այնպէս ամէն առտու մէյմէկ կտոր կարդաց մինչեւ որ լմնցուց այն պատմութիւնը :

Տղայք կը սիրէին Յովսէփայ պատմութիւնը լսել : Անոնք շատ անգամ այն պատմութիւնը լսած էին իրենց մօրմէն , որ կամ կարդացած էր և կամ անոր վրայով խօսած էր անոնց . և հիմա ալ անոնք կ'ուզէին որ հայրը կարդայ նոյն պատմութիւնը :

« Բոլորը ճշմարիտ է , այնպէս չէ՞ , հայր » , հարցուց Մարիամ :

« Այո , բոլորն ալ ճշմարիտ է » պատասխանեց հայրը :



“Ամէն բան”, հարցուց Յակոբ :

– “Այո, ամէն բան . վասն զի Աստուածաշունչն Աստուծոյ խօսքն է, և անոր մէջ ամէն բան որ իբր ճշմարտութիւն գրուած է՝ ճշմարիտ է” .

– “Աստուած շինեց Սուրբ Գիրքը” :

– “Սուրբ Գիրքին մէջ գրուած ամէն բան Աստուած գրել տուաւ : Միտքդ չէ՞, Մարիամ, թէ երբ մայրդ դուրսն էր, ուզեցիր նամակ մը գրել անոր” :

“Այո”, ըսաւ Մարիամ, “բայց չկրցայ գրել, մինչեւ որ դուն իմ ձեռքս չբռնեցիր” :


– “Այո, այնպէս ըրի, գրիչը քու ձեռքիդ մէջ գրի, և քու ձեռքդ իմինիս մէջ բռնելով շարժեցի, և այնպէս մօրդ ղրկուած նամակը գրուեցաւ, և ան ալ կրցաւ կարդալ զայն, և ըսաւ թէ ան իմ գրածս էր ոչ թէ քուկդ” :

“Ճիշդ այնպէս էր”, պատասխանեց Մարիամ, “քանզի դուն քու ուզածիդ պէս գրեցիր : Ես գրիչը բռնելէն զատ ուրիշ բան մը չըրի, և այնչափն ալ չէի կրնար ընել՝ եթէ դուն ինձի չօգնէիր” :

– “Շատ աղէկ, ինչպէս որ դուն մօրդ նամակ մը գրեցիր իմ օգնութեամբս, Աստուած ալ սուրբ մարդոց գրել տուաւ ինչ որ ուզեց : Սուրբ Հոգւով ինքն անոնց միտքերուն մէջ գրելու բաներ գրաւ, և անոնք ալ Անոր ուզածն ելին տարբեր բան մը չգրեցին :



Ուստի Մուրբ Գիրքը , թէեւ մարդոց ձեռքով գրուած է , Աստուծոյ խօսքը կը կոչուի” :



## ԳԼՈՒԽ ԺԶ

### ԲՈԼՈՐ ՄԱՐԴԻԿ ՄԵՂԱՆՉԵԼՈՒ

ՀԵՍԵՐԻՏ ՄՐՏՈՎ, ԾՆԵՆԻՆ

« Յովսեփայ եղբայրները , որ անոր այնչափ անգթութիւն ըրին , շատ չար մարդիկ էին , այնպէս չէ՞ , հայրիկ” , հարցուց Մարիամ :



« Այո՞ չար էին” , պատասխանեց հայրը :  
 – « Բայց գիտէ՞ք թէ անոնց չարութիւն և անգթութիւն ընելու բուն պատճառն ի՞նչ էր” :  
 « Յովսեփայ հօրը զանիկա իրենցմէ աւելի սիրելն էր , այնպէս չէ՞” , հարցուց Յակոբ :



– « Այդ բանին համար նախ և առաջ սկսան զանի ատել , բայց անոնց չարութեան բուն պատճառն ան չէր : Ես ձեզի ըսեմ ճիշդ ինչ էր այն պատճառը :

Յովսեփայ եղբայրները չար սիրտ ունէին , զԱստուած չէին սիրեր , և հոգ չէին ըներ անոր պատուիրածները կատարելու :

Անոնց սրտերը նախանձով , ատելութեամբ և ամէն տեսակ չար զգացումներով լեցուն էին . Աստուծոյ աղօթք չէին ըներ , որ Անիկա այս չար զգացումներն իրենց սրտերէն հանելով՝ տեղը բարի զգացումներ դնէր : Ուստի երբ անոնք տեսան թէ իրենց հայրն Յովսեփը աւելի կը սիրէր քան թէ զանոնք , մէկէն սկսան Յովսեփին ատել : Իրենց մտքերուն մէջ բարի բան մը չկար , որ զանոնք չար զգացումներէ և գործերէ արդիւնէր :

Ուրիշ մեծ ճշմարտութիւն մ'ալ ըսեմ ձեզի ,


Բոլոր մարդիկ չարութեան հակամէտ սրտերով աշխարհ կուգան :

Աշխարհիս մէջ եղած բոլոր չար գործքերուն բուն պատճառն այս է : Յովսեփայ եղբայրներուն սրտերն ուրիշ մարդոց սրտերէն չար չէին . Ինչու որ բոլոր մարդիկ մեղք գործելու հակամէտ սրտեր ունին ի բնէ : Իմ սիրելի պզտիկ տղայքս այսպիսի սրտերով ծնած են : Դուք ալ երբեմն չարութիւն կ'ընէք , այնպէս չէ՞ , Մարիամ” :



“ Այո , հայր , երբեմն կ'ընենք ” , ըսաւ պզտիկ  
աղջիկը քիթին տակէն :

– “ Բայց , եթէ ձեր սրտերը չար չլլային ,  
դուք բնաւ չար բան մը պիտի չընէիք , և այն ,  
պիտի բան մ'ընելու փափաքն անգամ պիտի  
չունենայիք , քանի որ անոր գէշ բան ըլլալը  
գիտէիք : Միշտ պիտի սիրէիք աղէկ բաները  
նել : Երբ մենք ուրիշները կը մեղադրենք ա-  
նոնց չար գործերուն համար , մոռնալու չենք  
թէ մենք ալ շատ անգամ մեղք կը գործենք ,  
և անոնց պէս մեղանշելու հակամէտ սրտեր  
ունինք ” :



## ԳԼՈՒԽ ԺԷ

### ԱՍՏՈՒՍԾ

#### ՄԵՐԴԸ ՍՈՒՐԻ ՍՏԵՂՆՕՆՅ

– “ Ուրիշ ճշմարտութիւն մ'ալ պիտի ըսեմ  
ձեզի , եթէ դուք իմ ըսածներէս չէք ձանձ-  
րանար ” , ըսաւ հայրը :

“ Մտքերնիդ կուգայ՞ արդեօք այն բաներն ,  
որ քանի մը օր առաջ ըսի ձեզի ամէն բան ստեղ-  
ծող Աստուծոյ վրայով ” :

“ Այո ” , պատասխանեց Մարիամ , “ դուն ըսիր  
թէ աշխարհն և ամէն տեսնուած բաներն Աս-  
տուած ստեղծեց ” :



« Մյնպէս է, բոլոր կենդանի արարածները, հրեշտակները, մարդիկը և ամէն տեսակ անասուններն Ստուած ստեղծեց : Ստուածոյ վրայով ըսածներէս ուրիշ բան մ'ալ կը յիշէ՞ք », հարցուց դարձեալ հայրը :

« Դուն ըսիր թէ՛ Ստուած շատ բարերար է մեզի », ըսաւ Յակոբ :

– « Մյո, շատ բարերար է, միանգամայն սուրբ : կը կարծէ՞ք թէ սուրբ Ստուած մը պիտի ստեղծէր մարդոց պէս չար սիրտ ունեցող արարածներ, որ կ'ուզեն Ստուածոյ արդիւած բաներն ընել » :

« Ես չեմ կարծեր », ըսաւ Մարիամ, « բայց բանը ի՞նչպէս եղաւ, հայր » :

– « Մտիկ ըրէ որ ըսեմ. Ստուած մարդը սուրբ ստեղծեց. սկիզբէն մարդուն վրայ մեղք չկար. անոր խորհուրդներն և ճամբաները բոլորն ալ բարի էին : Անատեն մարդը զՍտուած կը սիրէր, և ջանք կ'ընէր ամէն բանի մէջ Ստուածոյ հաճոյ ըլլալ : Անատեն աշխարհիս մէջ ոչ տրտմութիւն կար, ոչ լաց, ոչ ալ ցաւ. վասն զի մեղք չեղած տեղը տրտմութիւն ալ չկայ :

Բայց դժբաղդաբար օր մը մարդը մեղք դործելով՝ անհնազանդ եղաւ այս բարերար և սուրբ Ստուածոյն :

Անատեն մարդուն սիրտը չարին հակամէտ եղաւ : Սսիկա մարդուն յանցանքովն եղաւ՝ ոչ թէ Ստուած զանի այնպէս ստեղծեց : Մարդը



փոխուեցաւ, բայց Աստուած անփոփոխ մնաց :  
 Աստուած տակաւին բարերար և սուրբ է  
 Ուրիշ ժամանակ դարձեալ այս բանիս վրայ  
 ձեզի կը խօսիմ” :



## ԳԼՈՒԽ ԺԸ

Պ.ՕՏԻՍ ՄԵՂԻՅ ԶԱՆՅ

Նոյն օրը իրիկուան, Մարիամ գիշեր բարի՝  
 ըսելու համար հօրը սենեակը մտաւ, և սա ալ  
 ըսաւ սնոր, “ Հայր ես բան մը գիտեմ” :

“ Իրա՛ւ, ի՞նչ բան գիտես, ըսէ տեսնեմ” ,  
 պատասխանեց հայրը :

– “ Ես գիտեմ թէ որուն վրայով դուն այս  
 առտու խօսեցար . Ադամի վրայ էր” :

– “ Շիտակ ըսիր, Ադամ էր անոր անունը :  
 Անիկա Աստուծոյ առաջին ստեղծած մարդն էր,  
 Եւայ ալ առաջին կինը : Անոնք Աստուծոյ ար-  
 դիւածն ընելով և սուրբ չմնալով, անոնց զաւ-  
 կրներն ալ սուրբ չծնան :

Մենք Ադամայ ու Եւայի զաւակներն ենք,  
 և բոլոր այս աշխարհիս մէջ եղած մարդիկ ա-  
 նոնց զաւակներն են, և ամէնքս ալ չար սիրտ  
 ունինք :


Բայց կրնա՞ք ինձի ըսել թէ ի՞նչ էր Աստու-  
 ծոյ արդիւած բանը, որ Ադամ և Եւայ ըրին” :



« Այո , կրնամ ըսել » , պատասխանեց Յակոբ .  
 « անոնք պտուղ քաղեցին ծառէ մը , որմէ Աստուած պատուիրած էր անոնց չուտել » :

– « Ուրախ եմ որ ըսածներս միտք կը պահէք ,  
 և հիմա կ'ուզեմ որ ջանք ընէք սա ալ միտք  
 պահելու , թէ պզտիկ մեղք չկայ :

Գուցէ մեր նախածնողք կը խորհէին թէ արգիլուած ծառէն պտուղ մը քաղելը շատ պըզտիկ յանցանք է . բայց այնպէս չէր , մեծ յանցանք էր , քանզի Աստուծոյ , իրենց արարչին , անհնազանդութիւնն էր : Իմ սիրելի տղաքս , ասոր վրայ ամէն օր խորհեցէք , քանի որ կ'ապրիք , և բնաւ չար բան մը մ'ընէք՝ զայն պզտիկ մեղք համարելով , այլ յիշեցէք որ , որ և իցէ արգիլուած բան ընելը մեծ մեղք է : Գիշեր բարի » :



## ԳԼՈՒԽ ԺԹ

### ԳԵՐԵՂՄԱՆԱՏՈՒՆԸ

Մարիամու և Յակոբայ տանը քով Եկեղեցի կար , և անոր մօտ գերեզմանատուն մը :

Գերեզմանատան դռները կղպուած չէին , և անոր մէջ քալելու լայն ճամբայ մը կար , որ դէպ 'ի միւս կողմի գեղեցիկ արտերը կը տանէր : Անոնք շատ անգամ գերեզմանատունէն



արտերը կ'երթային, երբեմն անոնց հայրն ալ  
հետ կ'երթար :



Մնոնց տանը պատուհաններէն գերեզմանա-  
տունը կը տեսնուէր, և շատ անգամ կը պա-  
տահէր որ երբ հոն մեռել մը կը բերուէր, տղայք  
թաղման պաշտօնը կը տեսնէին :

• Տղայք պզտիկ էին, բայց գիտէին թէ հողը  
դրուած սնտուկին մէջ ինչ կար, քանզի անոնց  
մէկ պզտիկ եղբայրը մեռնելով, այնպէս սըն-  
տուկով թաղուած էր :

Խեղճ տղայք շատ լացին, երբ իրենց սիրելի  
պզտիկ եղբայրը կորսնցուցին . և անոնց անտա-  
նելի կը թուէր, որ անոր մեռեալ մարմինը հող  
ըը պիտի դրուէր, և այնուհետեւ զանի բնա-  
պիտի չկրնային տեսնել : Մնոնց ծնողքը ջանա-  
ցին զանոնք մխիթարել ըսելով՝ թէ պզտիկ եղ-  
բօրը հողին երկինք դնաց, և թէ հոն աւելի  
երջանիկ պիտի ըլլայ :



Ծնողքն անոնց ըսին նաեւ որ, եթէ անոնք ալ Աստուծոյ հնազանդին և Տէր Յիսուս Քրիստոսը սիրեն, իրենց եղբայրը պիտի տեսնեն երկինքը, և անոր հետ յաւիտեան երջանիկ պիտի ըլլան :

Եղբօրը մեռած ժամանակ Մարիամ և Յակոբ պզտիկ էին, և չէին կրնար աղէկ հասկընալ ամէն բան որ անոնց կ'ըսուէր. բայց կը հաւատային այն բաներուն :

Շատ անգամ կը խօսէին մեռած պզտիկ Յովհաննէսին վրայ, և կը զարմանային խորհելով թէ արդեօք անիկա ի՞նչ կ'ընէ երկինքը : Երբ գերեզմանատունէն կ'անցնէին շատ անգամ իրենց եղբօրը գերեզմանին քով կը կայնէին, և անոր վրայ կը խօսակցէին :



Երբ իրենց տունը հիւր կուգար, կ'ուզէին գերեզմանատունը տանիլ զանի, և իրենց սիրելի պզտիկ Յովհաննէս եղբօրը թաղուած տեղը ցուցընել. և բնաւ չէին մոռնար ըսելու թէ «Յով-

հաննէս երկինքն է հիմա, և մենք ալ, եթէ բարի ըլլանք և Տէր Յիսուս Քրիստոսը սիրենք, հոն պիտի երթանք երբ մեռնինք : Անատեն Յովհաննէսը դարձեալ պիտի տեսնենք, և այլ եւս բնաւ պիտի չիզատուինք անկէ, մեր հայրն ու մայրն ալ հոն պիտի ըլլան, և մենք անա-



տեն շատ երջանիկ պիտի ըլլանք” : Ասոնք էին այս պզտիկ տղոց խորհուրդները :



## ԳԼՈՒԽ Ի

ՊԵՏԻ Ե՛ ՈՐ ՄԵՂՎԵԸ ՊԵՏԻՈՒԻ

Աղամայ ու Եւայի վրայ խօսելուն հետեւեալ օրը Մարիամ և Յակոբ իրենց հօրը հետ գերեզմանատունը պտըտելու երթալով, սիրելի Յովհաննէսին գերեզմանին քով կայնեցան, և հայրն ըսաւ անոնց « Գիտէ՞ք, ինչո՛ւ համար ձեր եղբօրը մարմինը հողը դրուեցաւ » :

« Այո », պատասխանեց պզտիկ աղջիկը արցունք թափելով, քանզի առանց արցունքի Յովհաննէսին վրայով չէր կրնար խորհիլ, « մեռաւ, և անկէ ետքը մարմինը գերեզման դրուեցաւ » :

« Բայց ինչո՞ւ մեռաւ », դարձեալ հարցուց հայրը :

– « Հիւանդ ըլլալուն համար, այնպէս չէ՞, հայր » :

« Այո », պատասխանեց հայրը, « շատ սաստիկ էր անոր հիւանդութիւնը. սիրելի մանկիկը շատ ցաւ քաշեց » :

Բայց ուրիշ բան մը պիտի հարցընեմ ձեզի : Ինչո՞ւ համար քու սիրելի եղբայրդ Յովհան



նէս անանկ սաստիկ հիւանդութիւն և այնչափ  
ցաւ քաշեց” ։

Մարիամ և Յակոբ երկուքն ալ շփոթեցան ։  
« Հասկըցընեմ ձեզի » ըսաւ հայրը , « եթէ այս  
աշխարհիս մէջ մեզք չըլլար , ոչ ցաւ , ոչ հիւ  
ւանդութիւն և ոչ ալ մահ պիտի ըլլար ։ Բայց  
Աստուծոյ կամքն և օրէնքն այս է որ մեզքը  
պատժուի , և մեզքին մէկ պատիժն ալ մահն է ։  
Քու սիրելի եղբայրդ Յովհաննէս մեռաւ , մե  
ղաւոր ծնողներէ ծնած ըլլալուն և մեղսալից  
բնութիւն ունենալուն համար ։

Ամենուն ալ մահուան բուն պատճառն այս  
է ։ Մահը տեսակ մը պատիժ է , որով սուրբ և  
արդար Աստուած կը պատժէ մեզքը ։ Աշխար  
հիս մէջ մեր կրած բոլոր տրտմութիւնները մեր  
վրայ կու գան մեղանչական բնութիւն մը ու  
նենալնուս համար ։ Բայց ամենէն գէշն այս չէ .  
մարմինը մեռնելէն ետքը՝ անմահ հոգին ալ  
կրնայ պատժուիլ ։ Աստուած Սուրբ Գիրքին մէջ  
կ'իմացընէ մեզի թէ ամէն մեզք գործող հոգին  
պիտի պատժուի ։ Այնպիսի հոգի մը երկինք  
չի կրնար երթալ որ երջանիկ ըլլայ , այլ դժոխքը  
պիտի բանտարկուի , ուր ամէն բան թշուառու  
թիւն է և ցաւ” ։





## ԳԼՈՒԽ ԻԱ

## ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

ԱՄԵՆՆԻՆ ԼԱԻՆ

Խեղճ Մարիամ շատ տրտմութիւն զգաց և շատ արցունք թափեց մինչ հայրը մեղաց պատժոյն վրայով կը խօսէր : Հայրը տեսաւ ասիկա, և չէր ուզեր որ աղջիկը տրտում մնար, ուստի ըսաւ, «Գերեզմանատունէն ելլենք, արտերը քիչ մը պտըտինք, և անատեն բան մ'ըսեմք եզի և Յակոբայ, որով մխիթարուիք : Ճշմարտութիւններուն ամենէն լաւը ձեզի պիտի ըսեմ» :

Անատեն անոնք արտերը գացին, և քանի որ կ'երթային՝ Մարիամու արցունքը կտրեցաւ : Թերեւս գիտէր հօրը զրուցելու այն ուրախարար և մեծ ճշմարտութիւնը, քանզի տարակոյս չկայ թէ շատ անգամ լսած էր անոր վըրայով : Բայց այնպիսի ճշմարտութիւններ կան, որ անոնց վրայ որչափ որ խօսինք կամ խորհինք, տակաւին քիչ է :

– «Ձեզի բան մը կ'ուզեմ հարցընել, շատ անգամ լսած էք ինչ որ ես և ձեր սիրելի մայրը և ուրիշներ Տէր Յիսուս Քրիստոսի վրայով խօսած և կարդացած ենք, այնպէս չէ՞» :

«Այո, հայր, շատ անգամ», պատասխանեց Մարիամ :



– Ուրեմն կրնա՞ն ըսել ինձի թէ Տէր Յիսուս Քրիստոս ո՛վ է”:

– “Այո, Աստուծոյ Որդին է”:

– “Ուստի սիրելի աղջիկս, մարդոց գիտցած ճշմարտութիւններուն ամենէն լաւը սա է որ, Տէր Յիսուս Քրիստոս, Աստուծոյ Որդին, աշխարհ եկաւ մեզի պէս մեղաւորները փրկելու: Հիմա մտիկ ըրէք, քանզի շատ կը փափաքիմ այս մեծ ճշմարտութիւնը պարզապէս ձեզի հասկըցընել:


Աստուած վճռած է որ եթէ մարդիկ Անոր դէմ մեղանշեն, պատժուին, տրտմութիւն ունենան այս աշխարհիս մէջ, անոնց մարմինները մեռնին, հոգիներն ալ երկինքէն աքսորուին: Մեր նախածնողք, Ադամ ու Եւայ, Աստուծոյ այս վճիռը գիտէին, սակայն Անոր դէմ մեղանշեցին: Նմանապէս բոլոր մարդիկ Աստուծոյ դէմ կը մեղանշեն: Ուստի պէտք է որ ամէնքը պատժուին, քանզի Աստուծոյ խօսքն ի հարկէ պիտի կատարուի: Բայց Աստուած ուզելով մեղաւորներուն հոգիները փրկել, փրկիչ մը գտաւ, իր սիրելի Որդին, որ աշխարհ գալով մարդու մը պէս ապրեցաւ և խաչին վրայ մեռնելով՝ մեղաւորներուն տեղը մեղաց պատիժը կրեց. և այս կերպով Աստուծոյ խօսքն աւրուած չըլլալով՝ Անոր արդարութիւնը յայտնուեցաւ, և միանգամայն մարդոց փրկուելուն ճար մը գտնուեցաւ. քանզի ով որ իր մեղքե-



րուն վրայ զղջալով՝ Աստուծոյ սիրելի Որդւոյն  
անունովը թողութիւն կը խնդրէ՝ պիտի փրկուի :

Աստուած անոր նոր սիրտ և ուղիղ հոգի  
կուտայ, և այսպէս մարդը կը պատրաստուի  
երկինք երթալու և հոն բնակելու յաւիտեան :

Եթէ մենք այսպէս ընենք, Աստուած մեզ  
ալ պիտի պատրաստէ երկնից համար : Մեծ  
ճշմարտութիւններուն ամենէն լաւն ասիկա չէ՞” :




## ԳԼՈՒԽ ԻԲ

### ՓՈՒՇԷԿ ԳՍԵՆԸ

Մարիամու և Յակոբայ Հայրն այն ժամա  
նակ Աստուծոյ սիրոյն վրայ ուրիշ բան մը չը  
սաւ անոնց :

Գիտէր թէ պզտիկ տղայք կը ձանձրանան երբ  
բանի մը վրայով շատ կը խօսուի, և բնաւ չէր  
ուզեր անոնց մտքերն այսպէս ձանձրացընել :  
ուստի սկսաւ խօսիլ ուրիշ բաներու վրայ : Ար-  
տերուն մէկուն մէջ պզտիկ լիճ մը կար, որուն  
եզերքն երկայն կնիւն (սալ) կը բուսնէր : Հայրն  
ասոնցմէ քանի մը հատ քաղելով ըսաւ տղոցը,  
« Տղայութեանս ժամանակ շատ կը զուարճա-  
նայի կնիւններն հիւսելով և պզտիկ կողովներ  
չինելով :





Սիրելի քոյր մ'ուհնէի, որուն հետ շատ անգամ արտերը կ'երթայի, և ասոնց պէս կնիւներ կը ժողովէինք: Կը յիշեմ թէ անգամ մը գլխարկ (շտիւ) շինեցինք քրոջս պաճուճապատանքին (պէպէ) համար”:

“Ս. յսպիսի գլխարկ մը շատ գեղեցիկ է”, ըսաւ Յակոբ:

“Ես ալ կ'ուզեմ այնպիսի գլխարկ մ'ուհնենալ պաճուճապատանքիս համար”, ըսաւ Մարիամ. “Եթէ կամիս, ինձի համար հատ մը շինէ”:

“Հոս չեմ կրնար շինել”, պատասխանեց հայրը, “Քանզի ասեղ և դերձան պէտք է: Բայց բան մը կրնանք ընել. հիմա ասոնցմէ շատ մը հիւսելով տուն կը տանիք, և յետոյ ձեր մօրմէն կը խնդրէք որ զանոնք մէկտեղ կարէ”:

Ուստի երեքն ալ նստան. և Մարիամ հօրը հիւսած ժամանակը կը դիտէր զանի:

Հայրն երբ բաւական հիւսեց, անոնցմէ պըզտիկ պսակ մը շինելով՝ դրաւ Մարիամու գլուխը որ իր գլխարկը հանած էր: Մարիամ այնչափ հաւնեցաւ պսակին, որ կ'ուզէր զանիկա գլուխը դրած մինչեւ տուն երթալ, իր գլխարկն ալ հօրը տալ: Բայց հայրը, “Ոչ”, ըսաւ, “լաւ է որ գլխարկդ դնես, և եթէ կ'ուզես՝ պսակն ալ ես կը տանիմ”:

Աղջիկը հաճեցաւ այնպէս ընել, քանզի դիտէր թէ միշտ հօրը կամացը հպատակիլ աղէկ է:

Անոնց եղած տեղւոյն մօտերը տեսակ մը մո-






րենի կը բուսնէր, երկայն ճիւղերով և փուշե-  
րով լեցուն, որ ճամբուն վրայ կախուած էին:

Մարիամու շրջազգեստը (Ֆիսթան) փուշերուն  
մէկէն բռնուեցաւ, և պէտք եղաւ որ հայրը  
զայն ազատէր անկէ: «Այսպիսի փշոտ ճիւղե-  
րէ շինուած պսակ մը կը սիրե՞ս», հարցուց հայ-  
րը, երբ Մարիամ փուշերէն ազատած էր:

– «Ամենեւին չեմ սիրեր, հայր, ան զիս պի-  
տի ճանկրուտէ, ինծի պիտի մնասէ, և միսս  
պիտի արիւնոտէ»:

«Կարծեմ թէ այնպէս պիտի ըլլար», ըսաւ  
հայրը, «ես բնաւ չեմ ուզեր քեզի մնասել,  
աւելի կ'ընտրեմ ինծի մնասել քան թէ քեզի:  
Գիտե՞ս արդեօք, ատենօք որո՛ւն գլուխը փու-  
շէ պսակ դրին»:

«Յիսուսին», պատասխանեց պզտիկ աղջիկը:  
Այսպէս խօսակցելով տուն հասան:



ԳԼՈՒԽ ԻԳ

ՊԶՏԻԿ ՏՂՈՅ

ՀՐԸՄԸՆ ԱԼՅ ԲԲԻՍՏՈՍԻ ԵՐԹԱՂՈՒ

Մարիամ և Յակոբ միշտ կ'ուզէին պառկե-  
լէն առաջ իրենց հօրը սենեակն երթալ և, Գի-



չեր բարի, ըսել անոր. և եթէ անատեն հայրը  
չատ գործ չունենար, զանոնք քովը կ'առնէր  
և այլեւայլ նիւթերու վրայ քիչ մը անոնց հետ  
կը խօսէր :

Վերը յիշուած խօսակցութեան գիշերը, երբ  
տղայք անոր քով նստած էին, հայրն ըսաւ,  
«Կը յիշէ՞ք ինչ բանի վրայ էր մեր խօսակցու-  
թիւնը գերեզմանատան և արտերուն մէջ» :

«Տէր Յիսուս Քրիստոսի վրայով էր», պա-  
տասխանեց Յակոբ :

«Այնպէս էր», ըսաւ հայրը. «ուրեմն կըր-  
նա՞ք ըսել ինծի թէ ո՛ւր է հիմա Տէր Յիսուս» :

«Երկինքն է», ըսաւ պզտիկ աղջիկը :

– «Ուրիշ տեղ ալ չէ՞» :

«Չեմ գիտեր», պատասխանեց Մարիամ :

«Երկրիս վրայ ալ է», ըսաւ հայրը. «Անիկա  
Աստուած է, ինչպէս որ մարդ ալ է. քանզի  
Հայրը, Որդին և Սուրբ Հոգին մէկ Աստուած  
է : Այսպէս ըլլալով՝ Անիկա կարող է մեղաւոր-  
ները փրկել, և բոլոր իրեն եկողները օրհնել :  
Բայց կ'երեւայ թէ դուք չէք գիտեր անոր եր-  
թալ ինչ ըսել է : Աղօթք ընել սորված էք. եր-  
բեմն քովս ծունր դնելով աղօթք կ'ընէք ինչ-  
պէս որ պիտի ընէք այս իրիկուն :

Կը յուսամ թէ աղօթքի մէջ ինչ որ պիտի  
ըսէք, անոր վրայ պիտի խորհիք» :

Անատեն տղայքը ծունր դրին հօրը քով, և  
քանի մը պարզ խօսքերով կարճաւօտ աղօթք



մ'ըրին՝ ինչպէս որ սորված էին : Կարծեմ թէ  
անոնց հայրն ալ աղօթք մ'ըսաւ, անոնց ծնկան  
վրայ եղած ժամանակը :

Աղօթքը լմնցրնելէն ետքը հայրն ըսաւ, «Սի-  
րելի տղայքս, եթէ սրտանց աղօթք ընէք, Յի-  
սուս Քրիստոսի գացող կ'ըլլաք : Ով որ ան-  
կեղծութեամբ Քրիստոսի աղօթք կ'ընէ, և կը  
հաւատայ թէ Անիկա կարող է իրեն ներել և  
զինքն օրհնել, Անոր գացած կ'ըլլայ, և Ան ալ  
ըսած է թէ իրեն գացողներուն մէկը պիտի  
չվռնտուի : Ուրիշ մեծ ճշմարտութիւն մ'ալ  
պիտի ըսեմ ձեզի, որ ձեր սիրտերն ուրախա-  
ցընէ երբ անոր վրայ խորհիք, այսինքն թէ  
պզտիկ տղայոց հրաման կայ Քրիստոսի երթալ :



Անիկա, 'թող գան', ըսած է : Ժամանակաւ երբ  
ինք երկրիս վրայ էր, ծնողք իրենց տղայքն  
անոր բերին, որ անոնց վրայ ձեռք դնէ և զա-  
նոնք օրհնէ :



Քոյը կեցող քանի մը չափահաս մարդիկ կը  
յանդիմանէին բերողները, բայց Աստուծոյ բա-  
րերար և հեզ Որդին ըսաւ, « Թող տուէք աս-  
մանր տղոցը, և մի արդիլէք ատոնք ինծի դա-  
լէն, ինչու որ երկնից թագաւորութիւնը ա-  
տանկներունն է » :

## ԳԼՈՒԽ ԻԴ

### ՆՆՆՆՆՆՆՆ ՏԵՐԵՒԵՐՁԸ

Աստու մը Մարիամու և Յակոբայ հօրը սեն-  
եակին դուռը զարնուեցաւ, բայց ձայնը քիչ  
ըլլալուն համար, հայրը վստահ չէր թէ իրօք  
դուռը կը զարնուէր թէ ոչ. ուստի առանց բան  
մ'ըսելու ականջ դրաւ : Քիչ մ'ետքը դուռը  
նորէն զարնուեցաւ աւելի ուժով, և անատեն  
« Հրամմեցէք », ըսաւ հայրը : Դուռը բացուե-  
ցաւ, և պզտիկ Մարիամ և եղբայրը ներս մըտ-  
նելով ըսին, « Հայր, հիմա մենք սորվեցանք  
քու դուռի բանալ, ուստի երբ ուրիշ անգամ  
զարնենք, հարկ չէ որ դուն տեղէդ ելլես » :

« Կը տեսնեմ որ դուք կրնաք դուռս բանալ », ը-  
սաւ հայրը, « բայց ձեռքիդ ի՞նչ է, Յակոբ » :

— « Չե՞ս գիտեր, հայր, այսօր չորս տարին  
լմացուցի, ու հինգերորդը մտայ, և ասիկա իմ



Ժննդեանս տարեդարձին կարկանդակն է, որ քեզի համար բերի” :

Այն կարկանդակը շատ աղէկ էր, քանզի Յակոբայ մայրը շինած էր զայն : Երբ հայրը կերաւ “Շատ աղէկ է”, ըսաւ : Ասոր վրայ Յակոբ ուրախ եղաւ . մեծ տրտմութեան պատճառ պիտի ըլլար անոր՝ եթէ կարկանդակը շինուելու ժամանակ աւրուէր :

“Քու տարեդարձդ մոռցած չէի, Յակոբ”, ըսաւ հայրը, “Ժնողք այնպիսի օրերը չեն մոռնար :

Ես չամչով կարկանդակ չունիմ որ քեզի տամ, բայց կարծեմ թէ պզտիկ գիրք մը կրնամ գրտնել տարեդարձիդ օրը պարգեւ տալու քեզի :

Հիմա կրնաս քիչ մը կարդալ, և թերեւս գալու տարեդարձէն առաջ, բոլորովին պիտի լմնցընես այս գիրքը, և անատեն աւելի մեծը կուտամ քեզի” :

Յակոբ Հօրմէն խնդրեց որ իր անունը գրէ գրքին մէջ, և ըսաւ, “Այսօր ասկէ քիչ մը պիտի կարդամ մօրս” :

“Յակոբ”, ըսաւ հայրը, “կարծեմ թէ քիչ մ’առաջ ըսած խօսքերուս վրայ աղէկ խորհած չէի, երբ զանոնք ըսի : Կը յիշե՞ս ինչ ըսի քեզի” :

– “Ըսիր թէ գալու տարեդարձիս աւելի մեծ գիրք մը պիտի տաս ինծի, հայր” :


– “Այո, բայց կրնայ ըլլալ որ իմ պզտիկ տղաս չապրի մինչ միւս տարեդարձին օրը : Յակոբ,



կը ջանա՞ս այս ճշմարտութիւնը միտքդ պահել ,  
 թէ չորս տարեկան պզտիկ տղան ալ կլինայ մեռ-  
 նիլ” ։

“ Եթէ այնպիսի բան մը պատահի , երանի՛  
 թէ այն ատեն երկինք երթայի ես” , ըսաւ  
 Յակոբ ։

“ Ուստի , սիրելի զաւակս , եթէ ատանկ փա-  
 փաք մ’ ունիս , պէտք է որ հիմակուրնէ սկսիս  
 Յիսուսը սիրել և անոր աշակերտն ըլլալ” , պա-  
 տասխանեց հայրը ։



## ԳԼՈՒԽ ԻԵ

### ՓՈԹՈՐԻՒՆ ՄԸ

Յակոբայ ծննդեան տարեդարձէն քանի մ’ օր  
 տքը մեծ փոթորիկ մը ելաւ , որ դիշերուրնէ  
 կսաւ ։ Մարիամ և Յակոբ չարթընցան , քանզի  
 ողոց քուներ ընդհանրապէս խորուսկ է , բայց  
 անոնց հայրն ու մայրը քանի մը ժամ շարու-  
 ակ հովին անձրեւին և որոտման ձայնը լսած ,  
 փայլատականց պայծառ լոյսը տեսած էին ։  
 Երբ Մարիամ և Յակոբ ալ առտուանց անկո-  
 լինէն ելան , այն սոսկալի որոտումը լսելով՝ շատ  
 լախցան , և կը կարծէին թէ այնչափ առատ  
 անձրեւ բնաւ տեսած չէին ։



Անոնց պատուհանին դիմացի ճամբան լին մը  
 դարձած էր, հովն ալ այնչափ սաստիկ էր, որ  
 ծխնելուզին մէջէն փչած ժամանակը կը լսուէր  
 անոր ձայնը: Տղայք կը կարծէին թէ տունը կը  
 շարժէր, ուստի և շատ ուրախացան երբ ծնո  
 ղաց քով երթալու պատրաստուեցան:


Նախաճաշկի սենեակէն պարտէզը կը տես  
 նուէր: Նախընթաց օրը՝ այս պարտիզին ճամբուն  
 երկու կողմի բարձր կոթերով և գեղեցիկ գը  
 լուխներով շուշաններուն վրայ կը սքանչանային  
 տղայքը, բայց հիմա տեսան որ այն ծաղիկները  
 հովէն ծռած և անձրեւէն զարնուած էին, այն  
 պէս որ անոնց գեղեցկութիւնը բոլորովին խան  
 դարուած էր: Տղայք շատ տրտմեցան շուշան  
 ներուն այսպէս աւրուած ըլլալուն վրայ: Անձ  
 րեւը գեռ կուգար և հովը կը փչէր, թէեւ  
 փայլատակելն այնչափ սաստիկ, որոտման ձայնն  
 ալ գիշերուան պէս չէր, բայց գեռ Մարիամ  
 ու Յակոբը վախցընելու չափ բան կար, այնպէս  
 որ անոնք սիրտ չունէին խաղալու:

Նախաճաշկի ժամանակ հայրը խօսելով Աս  
 տուծոյ մարդասիրութեանը վրայ ըսաւ անոնց  
 «Փոթորիկը կը զրկուի օդը մաքրելու և զայ  
 պարզ ու առողջարար ընելու համար»:

Խօսեցաւ նաեւ Աստուծոյ ողորմութեան  
 վրայ՝ որ զանոնք անվտանգ պահած էր բոլոր  
 գիշերը, միանգամայն ըսաւ անոնց թէ Աստու  
 ծոյ համար որչափ դիւրին է, եթէ կամենայ



այնպիսի փոթորիկ մը ղրկել որ մէկ ժամու մէջ  
ամբողջ երկիրը կործանէ : Նաեւ չմոռցաւ ըսե-  
լու տղոցը թէ բոլոր զՍասունած սիրողներն ա-  
պահով են ամէն փոթորկէ , և թէ բան մը չի-  
կրնար անոնց մնասել . քանզի եթէ իրենց երկ-  
նաւոր Հայրը յարմար կը տեսնէ զանոնք ապ-  
հել , փոթորիկ մը չի կրնար դպչիլ անոնց , և  
թէ երբ Սասունած յարմար կը տեսնէ որ անոնք  
մեռնին փոթորկով կամ ուրիշ կերպով , անա-  
տեն անոնց երանեալ հոգիներն իր քովը կ'առ-  
նու :



## ԳԼՈՒԽ ԻԶ

### ՎՏԱՆԳԸ ՄԵՉ ՄԵՐ

ՊԵՐՏԵՒՈՐՈՒԹՅԱՆ ԿՍԵՐԵՆԻՆԷՆ ԵՏ ՊԵՇԵՆԻՈՒ ԶԷ

Կէս օրուան ատենները փոթորիկն անցնելով՝  
հովը կտրեցաւ , անձրեւը դադրեցաւ , որո-  
տում չէր լսուեր և փայլատականց լոյսն ալ  
չէր տեսնուեր : Արեգակն ամպերուն ետեւէն  
ելլելով՝ այնպէս պայծառ կը ծագէր , որ ճամ-  
բաները շուտով սկսան չորնալ . և պզտիկ թրո-  
չուններն՝ որ մինչեւ այն ատենը հանդարտ և  
լուիկ կեցած էին , հիմա ծառէ ծառ կը թրո-



չրտէին և իրենց անուշիկ երգումն օղը կը լե-  
ցընէին :

Մարիամ և Յակոբ շատ ուրախացան որ փո-  
թորիկն անցաւ :

Բայց մինչ անոնք կ'ուրախանային , անոնց  
ծնողքը տխուր լուր մ'առին :


Մարդ մը եկաւ անոնց իմացընելու թէ ծո-  
ւղուն մօտ տուներուն մէջ բնակող խեղճ կանայք  
և տղայք շատ տրտմութեան մէջ են . քանզի ի-  
րենց ընտանիքէն բոլոր ձկնորսներն առջի գի-  
շերը նաւակներով ծովն ելած էին ձուկ բռնե-  
լու , և հիմա այն նաւակներէն միայն մէկը կը  
տեսնուէր . ուստի կը վախնային թէ միւս նա-  
ւակներն ընկղմած և բոլոր մէջի մարդիկ խեղ-  
դուած էին : Նաեւ կ'երեւար թէ տեսնուած  
նաւակն անդամ պիտի չկրնար ցամաքը հաս-  
նիլ : Երբ Մարիամու ու Յակոբայ հայրը լսեց  
ասիկա , թէեւ շատ յոյս չունէր որ պիտի կըր-  
նար ձկնորսներուն մեծ օգնութիւն մ'ընել  
բայց ինքզինք պարտաւոր կը ճանչնար ձեռ-  
քէն եկածն ընել : Արդէն յիշուած է թէ ինք  
ժամանակաւ ճամբորդութիւն ըրած էր . ուստի  
գիտէր ծովուն վտանգներն , և կը կարծէր թէ  
կարող պիտի ըլլար գէթ քիչ մը օգնել վտան-  
գի մէջ եղող այն խեղճ մարդոց . ուրեմն ելաւ  
նաւաստեաց հանդերձին նման խոշոր հանդերձ  
մը հագաւ որ ծովն երթայ :

Մարիամ իր հօրն երթալը տեսնելով՝ լալ



սկսաւ, և կը խնդրէր անկէ որ նաւակով ծովը  
չելլէ, չըլլայ թէ խեղդուի: Հայրը համբուրեց  
պզտիկ աղջիկը, և ըսաւ, «կը խոստանամ զգու-  
շանալ և վայրապար զիս վտանգի մէջ չձգել: Բայց  
առտուան ըսածս միտքդ բեր, և սա մեծ ճըշ-  
մարտութիւնն ալ յիշէ, սիրելի Մարիամս, թէ  
մենք պարտաւոր ենք ըստ կարի օգնել մեր  
ընկերներուն և թէ վտանգը մեզ այս պարտա-  
ւորութենէն ետ պահելու չէ»:

Անատեն հայրն ու մայրն իրարու հետ քիչ  
մը խօսելէն ետքը, հայրը պզտիկ աղջիկն ու  
Յակոբը համբուրելով, «Մնաք բարով», ըսաւ,  
և շուտ մը դէպ 'ի ծով քալեց:



## ԳԼՈՒԽ ԻԷ

### ՏՂԱՅՈՑ ՀԱՅՐՆ

ԵՊԵՀՈՎ, ԿԸ ԴԵՌՆԵՅ

Մարիամ և Յակոբ այն օրէն առաջ իրենց  
հայրը նաւաստուոյ հագուստով տեսած էին:  
Սմառները երբեմն անիկա տղայքն և անոնց  
մայրը կ'առնէր և նաւակով ծովը կ'ելլէր: Ան-  
ատեն նաւավարի գլխարկ և բաճկոն կը հագ-  
նէր, և տղայքն անոր վրայ ձկնորսի հագուս-  
տը տեսնելով կը խնդային: Բայց հիմա չխըն-  
դացին: Անոնց սրտերը վախով լեցուած էին,



յիշելով որ իրենց հայրը համարձակութեամբ այնպիսի մեծ փոթորկէ մը ետքն այն ալեկոծեալ ծովը պիտի ելլէր : Սակայն մայրը շատ ջանաց անոնց հոգը փարատել :

Շատ ժամանակ տեւեց մինչեւ որ հայրը տուն դարձաւ : Կէս օրին չեկաւ, և ընթրիքին ժամանակն ալ դեռ դուրսն էր :

« Թող տուր որ քիչ մ'ալ կենամ, մայր », ըսաւ Մարիամ, երբ պառկելու ժամանակն եկաւ, « Թերեւս հայրս հիմա կուգայ » :

Յակոբ ալ ըսաւ, « Ես ալ կ'ուզեմ պառկելէս առաջ զանիկա տեսնել » : Մայրը հաճեցաւ անոնց խնդիրքը կատարել, անոնք ալ պատուհանին առջեւը կայնած հօրը դալուն կըսպասէին :

Վերջապէս ճիշդ երբ տղոց մայրն, « Ալ հիմա պառկելու էք », կ'ըսէր, տղայք պոռացին, « Սհա կուգայ, հայրս կուգայ », և սենեակէն դուրս փողոցը վազեցին զանի դիմաւորելու : Եկողն արդարեւ հայրն էր : Անիկա զանոնք գիրկն առաւ ու ըսաւ, « Ի՞նչ է աս, իմ պըղտիկ զաւկներս, տակաւին պառկած չէ՞ք » :

– « Ոչ, քանզի մայրս հրաման տուաւ որ ըսպասենք : Բայց, հայր, քու լաթերդ որչափ թաց են : Ինչէ՞ն այսպէս եղան » :

« Վաղը կը պատմեմ ձեզի », ըսաւ հայրը, « հիմա պառկելու էք. շնորհակալ եմ ձեզի որ դուրս եղած ժամանակս զիս մտքէ չհանեցիք » :

Այս միջոցին տուն մտան, և տղայքն իրենց յօժար կամօքը ննջելու դացին :



Բայց երթալէն առաջ չմոռցան հարցընել թէ արդեօք այն խեղճ ձկնորսներէն խեղդուող եղա՞ւ : “Ոչ, մէկը չխեղդուեցաւ, ուրախութեամբ կ'ըսեմ թէ բոլորն ալ ողջ մնացին”, ըսաւ հայրը :

## ԳԼՈՒԽ ԻԸ

### ՆՈՒՍԻՆՆԵՐԻՆ

Հետեւեալ առտուն նախաճաշկէն ետքը հայրը հարցուց իր զաւկներուն, “ Հետոս պտըտելու երթալ կ'ուզէ՞ք այս առտու ” :

“ Ս,յո , հայր”, պատասխանեցին երկուքն ալ, և ժամանակ չկորսնցընելով իրենց սենեակը վազեցին, ու շուտով եկան դուրս երթալու պատրաստ :

Հայրն ալ պատրաստ ըլլալով՝ մէկտեղ ճամբայ ելան :

“ Ո՞ւր պիտի երթանք , հայր”, հարցուց Մարիամ :

“ Բլրոյն դադաթը, և ետքը ձկնորսներուն տնակները”, ըսաւ հայրը :

“ Ուրախ եմ”, ըսաւ աղջիկը. “ ուրեմն իրիկուան պատահած բաները պիտի պատմես, և պատմած ժամանակդ մենք ալ ծովը կրնանք նայիլ ” :

Պայծառ առտու մըն էր, միայն հովը քիչ մը



չատ էր, քանզի փոթորկէն ետքը դեռ բոլորովին իջած չէր: Ճամբան տեղ տեղ տողմատ էր, բայց տղոց հոգը չէր, քանզի անոնց ոտքի ամանները հաստ էին, և ուր որ ճամբան շատ գէշ էր, հայրը կը գրկէր տղայքը: Շուտով բլրոյն գագաթը հասան, և հոն նստարանները չոր գտնելով՝ նստան քիչ մը յողնութիւն առնելու:




Ծովն առջի օրը տեսածնուն պէս հանդարտ և խաղաղ չէր. մեծ ու բարձր ալիքները ցամաքին կը զարնէին, և ճերմակ փրփուրներ օդն'ի վեր կը հանէին: Ալիքներուն ձայնն այնչափ սաստիկ էր, որ հարկ եղաւ Մարիամու, Յակոբայ և հօրը բարձրաձայն խօսիլ որ զիրար հասկընալու կարող ըլլան:

Տղայոց տեղը բարձր ըլլալով ծովէն վախճունէր, և տղայք կը սիրէին ալիքներուն ձայնը լսել:

«Հայր», ըսին անոնք, «հիմա իրիկուան պա-



տահաժը, և այնպէս թըջելուդ պատճառը կը հաճի՞ս մեզի պատմել” :



## ԳԼՈՒԽ ԻԹ

### ՁԿՆՈՐՄՆԵՐՈՒՆ

ՍՏԵՆԳԻ ՄԼՅՑ, ԻՅՆԵԼԸ

Հայրն ըսաւ, « Երէկ երբ այն տնակները հասայ, գտայ որ մեզի պատմուածը շիտակ էր :

Խեղճ կանայք շատ տրտմութեան մէջ էին : Ծովուն վրայ միայն մէկ նաւակ կը տեսնուէր : Աւելի ալեկոծութիւն կար քան թէ հիմա • Ժողովեզերքը քանի մը մարդիկ կային, որ այն մէկ հատիկ նաւակը կը դիտէին :

« Բայց, հայր” հարցուց պզտիկ աղջիկը, « այն մարդիկն ինչո՞ւ համար ծովն ելան այնպիսի փոթորկի ժամանակ” :

– « Սիրելիս, անոնք փոթորիկը սկսելէն առաջ դացած էին : Ձկնորսներն երբեմն իրիկուրնէ կ’ելլեն, և բոլոր գիշերը ծովը կը կենան ձուկ բռնելու համար : Այս անգամ ալ այնպէս ըրած էին, և մինչեւ կէս գիշեր ծովը հանդարտ էր :

Ալիքները մեր տեսած նաւակն ասդին անդին կը տարուբերէին, և կը վախնայինք թէ այն




խեղճ ձկնորսները ծովն ընկղմած էին փոթորկին սաստկութենէն :

Բայց մինչ այսպէս կը խօսէինք, ո՞հ, ի՞նչ ուրախութիւն զգացինք, երբ հեռուէն տեսանք որ պզտիկ առագաստ մը բացուեցաւ, և նաւակ մը երթալով ծովեզերքին մօտեցաւ, և տեսանք որ ամէն բան տեղն էր : Նաւակին մէջ երեք մարդ կար : Շատ ուրախ պիտի ըլլայիք եթէ այն խեղճ մարդոց կնիկները տեսած ըլլայիք, որոնք նաւակը դեռ ցամաքը չքաշած ալիքներուն մէջէն կը վազէին զանոնք դիմաւորելու : Ծովեզերքը գտնուող մարդիկ ըստ կարի օգնութիւն ըրին խեղճ ձկնորսներուն, և արդարեւ անոնք օգնութեան կարօտ էին : Թէ և փոթորկին վտանգներէն ազատած էին, բայց շատ յոգնած էին :

Ասիկա միայն մէկ նաւակն էր, միւս երկուքըն ո՞ւր էին : Եկած մարդիկը չէին կրնար ըսել : Փոթորիկը սկսելէն ետքն այլեւս տեսած չէին զանոնք : Ուստի մինչ կնիկներէն ոմանք ուրախութեամբ լեցուած էին որ այրերն ապահով դարձան, ուրիշները դառնապէս կուլային որ չըլլայ թէ իրենց էրիկները կորսուած ըլլային : Բայց երկնաւոր Հայրը հաճեցաւ անոնց ալ տրտմութիւնն ուրախութեան փոխել :

Առաջին նաւակը ցամաքը քաշուելէն քիչ մը ետքը, մէկը, որ դիտակով ծովը կը նայէր, յանկարծ պռուաց, « Նաւակի պէս բան մը կը տեսնեմ » :





Ամէնքս ալ  
մեր աչքերն ա-  
նոր ցուցուցած  
տեղը դարձու-  
ցինք, և պղտիկ  
բծի մը չափ բան  
մը տեսանք :  
Այն մարդը կըր-

կին ըսաւ, « Տեսածս նաւակ մըն է, բայց տակն  
ու վրայ եղած է » : Անատեն դիտակն ինծի տուաւ՝  
ես ալ նայելով տեսայ թէ ըսածը ճշմարիտ էր .  
նաւակը տակն ու վրայ եղած էր, բայց ինծի  
կողմար թէ անոր վրայ մարդու նման բան մը  
կը տեսնէի : Ուստի առանց ժամանակ կորսնցնե-  
լով՝ վեց մարդիկ ուրիշ նաւակ մը մտան ծովն  
ելլելու » : « Դուն ալ մտա՞ր, հայր », հարցուց  
աղջիկը :

– Այո՞, Մարիամ, « այն վեց մարդոց մէկն  
ալ ես եղայ » :

« Ուրեմն քու հանդերձիդ այնպէս թըջուած  
ըլլալուն պատճառն այս է », ըսաւ Մարիամ .  
« այն տակն ու վրայ եղած նաւակին հասա՞ր » :

– Այո, ուրախութեամբ կ'ըսեմ, յարմար ժա-  
մանակին հասնելով՝ այն խեղճ մարդիկը խեղ-  
դուելէ ազատեցինք : Երկու անձինք կային հոն՝  
որ նաւակը բռնած կախուած էին, բայց անոնց  
ոյժը գրեթէ հատած էր, վասն զի քանի մը  
ժամ այնպէս կախուած մնացած էին :



Արդարեւ, որչափ հնար էր, արագ թի քաշեցինք անոնց շուտով հասնելու համար, և շատ ուրախացանք երբ այն երկու կէս խեղդուած մարդոց հետ նորէն ցամաքը հասանք” :

– “Միւս նաւակն ի՞նչ եղաւ, հայր, քանզի ըսիր թէ երեք հատ էին” :

– “Այնպէս է, և անոր համար էր որ երէկ իրիկուն այնչափ ժամանակ սպասեցի, քանզի ծովեզերքէն մատ մ’անդին չգացի մինչեւ որ միւս նաւակը չտեսայ, և ետքը քիչ մ’ալ սպասեցի մինչեւ որ ձկնորսներն ողջ առողջ ցամաքը ելած տեսայ :

Անոնցմէ բաժնուած ժամանակս ամէնքը՝ այսինքն ձկնորսներն, անոնց կանայքն և տղայքը շատ դոհ և ուրախ էին, քանզի թէեւ ձուկ բռնուած չէր, թերեւս նաւակ մ’ալ կորսուած էր, ձկնորսներէն ոմանք ալ շատ վտանգաւոր վիճակի մէջ ինկած էին, բայց փոթորկէն կեանքի կորուստ չկար : Հիմա տնակներն երթանք, և հարցընենք այն խեղճ մարդոց վրայով, որ այնչափ ժամանակ նաւակէն կախուած ջուրին մէջ մնացին” :

## ԳԼՈՒԽ Լ

### ՇՆՈՐՀԱՆՆՈՒԹԻՒՆ

Երբ Մարիամ և Յակոբ դէպ’ի ձկնորսներուն տուններն երթալու ճամբայ ելան, իրենց հօրն



առջեւէն վազեցին, քանզի ճամբան աղէկ գիտէին: Երբ հոն մօտեցան, տեսան որ ձկնորսներէն ոմանք առագաստներ և ուռկաններ կարկրտելու զբաղած էին:

Ամենէն առաջ տղայքն և անոնց հայրն այն մարդիկը տեսնելու գացին որոնք խեղդուելու վտանգէն ազատուած էին: Ասոնք իրենց կանանց խնամովը քիչ մ'աղէկցած էին և կրնային քալել, ու կ'ըսէին «Քանի մը օրէն նորէն ծովու ելլելու կարող պիտի ըլլանք»:

«Բայց ի՞նչպէս կրնաք երթալ առանց նաւակի», հարցուց Յակոբ: Անոնք պատասխան տուին, «Նաւակը կորսուած չէ, այլ գտնուած և ցամաքը հանուած է, և շատ մնասուած ալ չէ»: Մարիամու ու Յակոբայ հայրը շատ ուրախացաւ այս լսելով, քանզի գիտէր թէ այն մարդիկը շատ նեղութիւն պիտի քաջէին եթէ անոնց նաւակը կորսուած ըլլար:

Ձկնորսներն իրենց ընտանեացը հետ շատ շնորհակալութիւն յայտնեցին տղոց հօրն՝ որ այն օգնութիւնն ըրաւ անոնց: Մարիամ և Յակոբ ասոնց խօսքը մեծ հաճութեամբ մտիկ ըրին, և շատ ալ ուրախ եղան, որ իրենց հայրն ուրիշներուն օգնած էր իր կեանքը վտանգի դնելով:

Հայրն ալ ըսաւ ձկնորսներուն, «Կը յուսամ թէ ձեզ վտանգէ և մահէ ազատողին շնորհակալ ըլլալու մոռցած չէք: Եթէ Աստուած չօգ-



նէր ձեզի՝ մարդոց օգնութիւնը պարասպ պիտի  
ըլլար : Ձեզմէ կը խնդրեմ որ այս ճշմարտու-  
թիւնը յիշէք, թէ ամէն օր ցամաքի և ծովու  
վրայ մեզ վտանգէ ազատ պահողն Աստուած է :  
Յետոյ իր գրպանէն (ճէպ) պզտիկ Աստուածա-  
շունչ մը հանելով, հարցուց այն մարդոցը «Ժա-  
մանակ ունի՞ք որ ձեզի ասկէ քանի մը տուն  
կարդամ» :

«Այո», ըսին անոնք, «ունինք և կ'ուզենք  
մտիկ ընել եթէ կը կարդաք», և անոր բոլոր-  
տիքը ժողովուեցան, անոնց կանայքն ու տղայքն  
ալ մէկտեղ :

Շատ զուարճալի բան էր տեսնել այնքան  
զուարթ դէմքեր՝ այնպիսի տեղ մը՝ ուր օր մ'ա-  
ռաջ մեծ տրտմութիւն կը տիրէր : Տղոց հայրը  
սկսաւ կարդալ 107<sup>րդ</sup> Սաղմոսին սա հետեւեալ  
տուներն :

«Նաւերով ծովը ինջնողները,  
Ու մեծ ջուրերու մէջ գործ գործողները,  
Անոնք Տէրոջը գործքերը  
Ու անոր հրաշքները կը տեսնեն անդուհնդի-  
մէջ :

Վասն զի ան կ'ըսէ, ու մրրկալից հովը կը  
հանէ,

Որ անոր ալիքները կը բարձրացընէ :

Երկինքը կ'ելլեն, ու անդուհնդը կ'իջնեն .

Անոնց անձերը նեղութենէ կը հալին .

Գինով մարդու պէս կը դողդղան ու կ'երերան :



Եւ անոնց բոլոր իմաստութիւնը կը հատնի :  
Մնատենը Տէրոջը կ'աղաղակեն իրենց նեղու-  
թեանը մէջ ,

Ու կը փրկէ զանոնք իրենց տառապանքներէն :  
Մըրիկը հանդարտութեան կը դարձընէ ,

Ու ալիքները կը դադարին :

Իրենք ալ կ'ուրախանան որ դադարեցան .

Եւ կ'առաջնորդէ անոնց իրենց ուզած նա-  
ւահանգիստը :

Թող գոհանան Տէրոջմէն իր ողորմութեանը  
համար ,

Ու մարդոց որդիներուն իր ըրած հրաշքնե-  
րուն համար” :

Ասոնք կարդալէն ետքը տղոց հայրն ուրիշ  
քանի մը խօսք ալ ըրաւ ձկնորսներուն , խընդ-  
րելով անոնցմէ՝ որ յիշեն թէ միայն Աստուած  
կարող է մեզ աղատել թէ այս աշխարհիս վտանգ-  
ներէն և թէ հանդերձելոյն մէջ մեզաց արժա-  
նաւոր պատիժէն : Յետոյ , « Մնաք բարով՝  
ըսելով , Մարիամու ու Յակոբայ հետ բլուրն  
ելաւ :





## ԳԼՈՒԽ ԼԱ

## ԱՍՏՈՒԾՈՅ ՔԱՂՅՐՈՒԹԻՒՆԸ

ՄԵՕ, ԵՊԵՇԻՄՈՒԹԻՆԵՆ ԿՆՈՒՆՔՆՈՐԻԷ

Մինչ տուն կ'երթային, ճամբան Յակոբայ ու Մարիամու հայրը հարցուց անոնց, «Հասկըցա՞ք Աստուածաշունչէն կարդացածս»:

«Կարծեմ թէ քիչ մը հասկըցայ», ըսաւ Մարիամ:

– «Ուրեմն կը յուսամ թէ այն հասկըցածդ պիտի չմոռնաս: Այն մարդիկը, որ այսօր ողջ և առողջ տեսաք, կրնային ծովուն մէջ խեղդուիլ եթէ Աստուծոյ ողորմու թիւնն և քաղցրութիւնը զանոնք պահած չըլլար, և այն ատենը անոնց խեղճ կանայքն ու տղայքը շատ տրտմութեան ու ցաւի մէջ պիտի մնային:

Կը վախնամ թէ անոնցմէ ոմանք այս ողորմութեանը վրայ պէտք եղածին չափ չեն խորհիր:

Մարդիկ Աստուծոյ վրայ ըստ արժանւոյն չեն խորհիր, արդարեւ ոմանք անոր վրայով բնաւ չեն խորհիր, բայց միայն սնատենը որ նեղութեան մէջ կ'իյնան: Ասիկա շատ ցաւալի է և կը ցուցընէ թէ անոնց սրտերը չար են:

Ոմանք թէպէտ միշտ այնպիսի բաներ կ'ընեն



որ գիտեն թէ Աստուած արդիլած է իր Սուրբ  
Գրքին մէջ, և բնաւ մտքերնէն չեն անցըներ  
անոր պատուէրները, սակայն երբ վտանգի մէջ  
կ'ըլլան, անատեն կ'սկսին Աստուծոյ օգնութիւն  
խնդրել:

Այսպէս ընելը ուղի՞ղ է: Աղէկ է ամէն ժա-  
մանակ Աստուծոյ օգնութիւն խնդրել, և  
ամէն օր աղօթք ընել Անոր, և օրհնել զԱնի-  
կա. բայց եթէ ասիկա միայն ներդրութեան ատեն  
ընենք, և ուրիշ ժամանակ Անոր դէմ մեղան-  
չենք, չենք կրնար յուսալ թէ Ան մեր աղօթ-  
քը պիտի լսէ:

Դարձեալ կ'ուզեմ որ գիտնաք թէ Աստուած  
այնչափ քաղցր և ողորմած է, որ շատ ատեն  
չար մարդոց անգամ կ'օգնէ, երբ Անկէ օգ-  
նութիւն կը խնդրեն:

Աստուծոյ այս բարերարութիւնը երբեմն զմար-  
դիկ իրենց մեղանչական գործերէն զղջալու կ'ա-  
ռաջնորդէ, ու նաեւ ներում խնդրելու Աս-  
տուծոյ Որդւոյն Յիսուսի միջնորդութեամբն,  
որ մեղաւորները փրկելու եկաւ:

Պիտի յիշէ՞ք միշտ այս ճշմարտութիւնը թէ  
Աստուծոյ քաղցրութեան նպատակն է մեղա-  
ւորներն ապաշխարութեան բերել”:





## ԳԼՈՒԽ ԼԲ

ԵՊԵՇՆԻՄՈՒԹԻՒՆՆ Ի՞ՆՉ Է

« Կարծեմ դուք աղէկ չէք գիտեր թէ ապաշխարութիւն բառն ինչ ըսել է : Պզտիկ տղոց համար դժուար է այս բառը հասկնալ : Ուստի ձեզի բացատրեմ անոր միտքը :

Կը յիշես Մարիամ թէ անցած շաբթու օր մը պզտիկ աղջիկ մը շատ չարութիւն ըրաւ, բարկանալով թէ Մենա . . . » :

Մարիամ չսպասեց որ հայրը մնացածն ըսէր, քանզի աղէկ գիտէր որուն վրայով կը խօսէր :

« Ես էի ան », ըսաւ, « բայց մէյ մ'ալ պիտի չընեմ » :

– « Ս. յո, դուն էիր, Մարիամ, և թէեւ հայրդ ու մայրդ տրտմեցան քու ըրած չարութեանդ համար, բայց ուրախացան ալ երբ դուն եկար, իմ ըրածիս համար կը ցաւիմ, և ասկէ ետք պիտի ջանամ աւելի լաւ աղջիկ մ'ըլլալ՝ ըսելով Մենք այս խօսքն անկեղծութեամբ ըսելուդ տարակոյս չունէինք, ուստի ըսինք թէ արդարեւ ապաշխարած ես :

Նոյնպէս երբ մարդիկ իրենց ըրած չարութիւններուն և երկնաւոր Հօրը դէմ մեղանչելնուն համար կը տրտմին, կ'ըսենք թէ անոնք կ'ապաշխարեն. անոնց տրտմութիւնն ապաշ



խարուժիւն կը կոչուի : Հիմա կը հասկընա՞ս թէ  
ապաշխարուժիւն ի՞նչ ըսել է” :

“ Այո, հայր”, ըսաւ Մարիամ :

– “ Ուստի երկու բան ալ կայ, զոր դուն և  
Յակոբ մտքերնիդ պահելու էք : Պիտի ջանա՞ք  
այնպէս ընել : Առաջինն սա է թէ Աստուած  
խօսք տուած է ամէն ճշմարտապէս ապաշխա-  
րողին ներել : Երկրորդն ալ սա է թէ ամէն  
ճշմարտապէս ապաշխարհողը շատ զգոյշ պիտի  
ըլլայ որ նորէն չարուժիւն չընէ :

Հերիք չէ որ դուն կը զղջամ ըսես,

Ու չարուժիւններդ ալ շարունակես :

Ապաշխարուժեան յայտնի նշանը,

Նորէն չընելն է սիրած մեղքերը,

Ու ապաշխարելդ անկեղծութիւնով

Յայտնի ցուցընել մէյմ’ալ չընելով” :



## ԳԼՈՒԽ ԼԳ

### ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

#### ԱՄԷՆ ԲԵՆԻ ՏԷՐՆԵ

Մարիամու ու Յակոբայ հայրն անոնց ըսաւ,  
“ Քանի մը ըսպէ ծառերուն տակ նստինք, և  
մինչ ծովը կը նայիք՝ փոթորկի մը պատճու-  
թիւնն ընեմ ձեզի : Ժամանակաւ նաւ մը կար  
ծովուն վրայ” :



“Մ.յս ծովուն վրայ, հայր”, հարցուց Յակոբ :

– “Ոչ, այս ծովուն վրայ չէր, ասկէ շատ հեռու էր, աշխարհիս միւս կողմը : Մ.յն նաւը ցամաքէն ելած ժամանակը ծովը շատ հանդարտ էր : Նաւը տակաւին ծովեզերքէն չհեռացած...” :

“Չկնորս կա՞ր մէջը”, հարցուց Մարիամ :

– “Չկնորս կար, ուրիշ մարդիկ ալ կային, բայց անոնք այս անդամ ձուկ բռնելու ելած չէին, հապա ծովուն միւս կողմն անցնելու միտք ունէին : Նաւը ցամաքէն հեռանալէն քիչ մը ետքը մեծ փոթորիկ ելաւ : Հովը սաստիկ էր, և ալիքներն այնչափ բարձրացան որ նաւը կը ծածկէին : Նաւուն մարդիկը կը տեսնէին վտանգը, և սկսան շատ վախնալ :

Բայց նաւուն մէջ մէկը կար որ այն սաստիկ փոթորկէն չէր վախնար, և առանց խռովելու նաւուն մէկ կողմը հանդարտ կը քնանար :

Ետքը միւս մարդիկ անոր քովը դալով արթընցուցին զանի : Կը խորհէին որ, եթէ զիրենք ազատելու կարող մէկը կայ, ան պիտի ըլլայ ուստի ըսին անոր, ‘Սզատէ մեզ ինչու որ ահա կը կորսուինք’ : Անատեն ան ալ ելաւ և ծովուն նայելով ըսաւ, ‘Գաղբէ և լուռ կեցիր’ : Երբ ան այս խօսքն ըսաւ, հովը դադրեցաւ, ալիքները հանդարտեցան և մեծ խաղաղութիւն եղաւ : Գիտէ՞ք, ո՞վ էր ասիկա որուն հովն ու ալիքները հնազանդեցան” :

“Ո՞վ էր ան, հայր” հարցուց Յակոբ :



– « Տէր Յիսուս ֆրիստոսն էր, և այն մարդը՝  
անոր աշակերտներն էին ։




Յիսուս վտանգի մէջ եղող մարդոց աղաչանք-  
ներուն այսպէս մտիկ ըրաւ և զանոնք աղա-  
տեց ։ Որչափ զօրաւոր էր անոր խօսքը, որ փո-  
թորիկն անգամ անոր հնազանդեցաւ ։

Այս դէպքէն սա մեծ ու փառաւոր ճշմար-  
տութիւնը կը սորուինք որ, Յիսուս ֆրիստոս  
ամէն բանի Տէրն է” ։

ԳԼՈՒԽ ԼԴ

ԿՈՒՆԵՍՈՒՄԻ ՏՂԵՅԻ

Մարիամու և Յակոբայ հօրը տանը մօտ տուն





մը կար, ուր երկու տղայք և երկու աղջիկ իրենց հօրն ու մօրը հետ կը բնակէին: Ասոնք երջանիկ ընտանիք մը չէին, քանզի տղայք շատ անգամ կուիւ կ'ընէին, իրարու գէշ անուաններ կուտային և զիրար կը ծեծէին:



Երբեմն Մարիամ ու Յակոբ, երբ իրենց պարտէզը կը խաղային այն տղայոց բարձրաձայն աղաղակը կը լսէին. երբեմն ալ փողոցը կը տեսնէին զանոնք որ զիրար կը ծեծէին և իրարու

վրայ հող կը նետէին: Մարիամ և եղբայրը շատ կը տրտմէին, երբ այս բաները կը տեսնէին կամ լսէին:



Մնոնք կը խորհէին՝ և օր մը իրենց հօրն ալ ըսին, « Եթէ մեր սիրելի եղբայրը պզտիկ Յովհաննէս ողջ ըլլար, մենք անոր այսպիսի բան մը պիտի չընէինք, ոչ ալ անոր հետ խստութեամբ պիտի վարուէինք »:

Մնգամ մը երբ այս կռուասէր տղայք մէկտեղ կը խաղային, աղջկանց մէկը ձեռքով իր մեծ եղբօրը զարկաւ ու փախաւ: Մնատեն տղան գետնէն մեծ քար մ'առնելով, քրոջը ետեւէն վազեց: Այնչափ բարկացած էր որ վազած ատենը « Քեզ պիտի մեռցընեմ », կը պոռար: Աղջիկը շատ վախցաւ, քանզի գիտէր թէ եղբայրն իրմէ զօրաւոր էր, և բարկութեան ատենը ինչ մնաս որ տար՝ հոգ չէր ըներ: Ուստի ըստ կարի արագ փախաւ, բայց եղբայրն աւելի շուտ վազելով անշուշտ պիտի բռնէր քոյրը եթէ աղջիկը մտած չըլլար այն պարտէզը, ուր Մարիամ և անոր հայրը կը գտնուէին: Աղջիկն անոնց քով վազելով ըսաւ, « Կ'աղաչեմ, մի թողուք որ իմ չար եղբայրս ինծի մօտենայ, զիս պիտի մեռցընէ »:


Տղան քրոջը ետեւէն վազելով պարտէզը մտաւ առանց Մարիամու հայրը տեսնելու:

Բայց երբ զանոնք տեսաւ՝ կանկ առաւ, ու ետ պիտի դառնար: Բայց Մարիամու հայրը զանի կանչելով « Գէորգ այդ քարը վար դիր և հոս եկուր », ըսաւ:

Գէորգ իրեն հրամայուածին պէս ըրաւ, քան-



զի կը վախնար փախչիլ, բայց կամաց կամաց կը  
 քալէր : Վերջապէս անոնց քովն եկաւ, և Մա-  
 ռիամու հայրը տղուն և քրոջը մէյմէկ ձեռքէն  
 բռնելով շուք տեղ մը դնաց՝ հոն անոնց հետ  
 խօսելու : Մարիամ ու Յակոբ ալ հոն դացին  
 մտիկ ընելու թէ իրենց հայրն ինչ պիտի ըսէր  
 անոնց :



## ԳԼՈՒԽ ԼԵ

### ԿՌՈՒԻԼԸ ՈՒ ԾԵԾԿՈՒԻԼԸ

ՇԱՏ ԳԻՇ, ԲԵՆԵԻ ԵՆ

Մարիամու ու Յակոբայ հայրը շատ մարդա-  
 սիրու թիւն ցուցուցած էր այն անդգամ տղոցը  
 երբեմն պզտիկ գիրքեր կու տար անոնց կար-  
 դալու, երբեմն իր գործին կը խրկէր զանոնք  
 երբեմն ալ իր պարտէզը անպիտան խոտերէ  
 մաքրել տալով այս գործին համար ստակ կը  
 վճարէր անոնց, և երբ անոնց կը հանդիպէր  
 շատ մարդասիրու թեամբ կը խօսէր անոնց հետ  
 Ս.յս է պատճառը որ անոնք հիմա ալ անոր հե-  
 տը երթալ հաճեցան :

Հայրը հովանւոյն տակ նստաւ, և պզտիկ  
 աղջիկը քովը նստեցուց, մինչ եղբայրն միւ-  
 կողմը կայնեցաւ :



« Չեռքդ բռնած քարով ի՞նչ պիտի ընէիյի », հարցուց տղուն :

« Լուսիան ինձի զարկաւ, և միշտ կը զարնէ ինձի », ըսաւ տղան :

– « Բայց դուն ի՞նչ պիտի ընէիր այդ քարով » :

« Ըսաւ թէ քեզ պիտի մեռցընեմ ». պատասխանեց Լուսիա :

– « Հասկըցայ, դարձեալ կուիւ ըրած էք » :

Անատեն Գէորդ և Լուսիա սկսան յանցանքն իրարու վրայ ձգել : Մարիամու հայրն անոնց ըսածին մտիկ ընելէն ետքը սկսաւ անոնց հետ խօսիլ :

« Եղբայրներու ու քոյրերու իրարու հետ ծեծկուիլն ո՞րչափ ցաւալի է », ըսաւ :

Անոնց յիշեցուց կայէնը, որ այնչափ չար էր



որ նոյն իսկ իր եղբայրն Աբէլ մեռցուց :

Անոնց պատմութիւնն մ'ալ ըրաւ իր ծանօթ





փոքր տղու մը վրայով, որ բարկութեամբ իր  
պզտիկ եղբայրը զարնելով զանիկա սպաննած էր:

Անատեն Գէորգայ դառնալով ըսաւ « Դիցուք  
թէ քու այնչափ բարկացած ատենդ քոյրդ  
բռնէիր, ի՞նչ կ'ըսես, այն քարով պիտի զար-  
նէի՞ր անոր »:

Գէորգ պատասխան չտուաւ:

« Կարծեմ թէ այնպէս պիտի ընէիր », շարու-  
նակեց Մարիամու հայրը, « և եթէ այն ծանր  
քարով անգամ մը անոր զարնէիր, կրնար ըլ-  
լալ որ զանի մեռցընէիր »: Եւ անիկա փոխանակ  
հիմա հոս ողջ կենալու, ճամբուն վրայ արիւ-  
նաթաթախ պառկած, խօսելու և շարժելու  
անկարող պիտի ըլլար: Կուգէի՞ր քոյրդ անանկ  
տեսնել, Գէորգ »:

Այս միջոցիս տղուն աչքերը լեցուեցան: Այն-  
պիսի բանի մը վրայ չէր ուզէր խորհիլ, և ըսաւ  
« Շատ կը զղջամ »:

Յետոյ հայրը Լուսիային դառնալով այսպէս  
խօսեցաւ, « Ո՛րչափ մեղք է որ և իցէ բան մ'ը-  
նել ուրիշը բարկացընելու համար: Կը ցաւիմ  
որ համարձակեցար ձեռքդ վերցընել եղբօրդ  
զարնելու, թէ և միտք չունէիր անոր շատ վնա-  
սել »: Աղջիկն ալ ըսաւ, « Կը զղջամ ըրածիս  
վրայ ». և սկսաւ լալ:

Յետոյ Մարիամու հայրն ըսաւ անոնց, « Դուք  
պարտական էք ձեր յանցանքներն Աստուծոյ  
խոստովանիլ, և անկէ թողութիւն նաեւ օգնու-



Թիւն խնդրել՝ որ նորէն այսպիսի չար բան մը չընէք”:

Գարձեալ ըսաւ, « Եթէ իրարու հետ խաղաղութեամբ վարուիք, շատ երջանիկ պիտի ըլլաք: Ան մեծ Աստուածն որ ամէն բան կը տեսնէ և կը դիտէ, կը սիրէ այն տղայքն որ իրարու հետ սիրով կը վարուին. բայց ամէն օր կռուասէրներուն կը բարկանայ և կ'ըսէ թէ իմ եղած տեղս անոնք պիտի չգան”:

Հիմա նայինք թէ Սուրբ Գիրքն, որ Աստուծոյ խօսքն է, ի՞նչ կ'ըսէ ձեզի: «Աս է իմ պատուէրս որ մէկզմէկ սիրէք»: «Ան որ իր եղբայրը չսիրեր, մահուան մէջ կը մնայ: Ամէն ով որ իր եղբայրը կ'ատէ՝ մարդասպան է»: «Որդեակներս, չէ թէ խօսքով ու լեզուով սիրենք, հապաղործքով ու ճշմարտութիւնով”»:

Անատեն Գէորգ ու Լուսիա պարտէզէն ելլելով՝ երկուքը մէկտեղ խաղաղութեամբ տուն դարձան:



## ԳԼՈՒԽ ԼԶ

ՄԵՂՔԻՆ Ի՞ՆՉ Է

Օր մը երբ Մարիամ ու Յակոբ իրենց հօրը հետ կանանչ դաշտերուն մէջ հովանաւոր բլրակին վրայ նստած էին՝ հայրն անոնց հարցունց, « Գիտէ՞ք մեզքն ինչ է”»:



Մարիամ կը կարծէր թէ գիտէ և ըսաւ, «Ս.յո, ինչ որ չար է՝ մեղք է»:

«Բայց ի՞նչպէս գիտես թէ ո՛ր բան չար է և ո՛ր բան բարի», հարցուց դարձեալ հայրը:

«Բարկանալ, քեզի ու մօրս չհնազանդիլ, և գէշ խօսք ըսել չար է», պատասխանեց Մարիամ:

«Ս.յո», ըսաւ հայրը. «բայց, սիրելի աղջիկս, այդ իմ հարցմանս պատասխան չէ: Ի՞նչպէս գիտես թէ այդպիսի բաները չար են»:

– «Դուն այնպէս ըսած ես ինծի, հայր»:

– «Ուրիշ մը քեզի այնպիսի բան մը երբէք ըսած չէ՞»:

– «Ս.յո, մայրս և Աննան ալ ըսած են»:

«Ասո՛նց թէ զատ արդեօք ուրիշ մ'ալ ըսած չէ», հարցուց հայրը:

«Չգիտեմ», պատասխանեց Մարիամ:

– «Ուրեմն ինծի մտիկ ըրէ, և ես քեզի ըսեմ թէ ուրիշ ով ասիկա ըսած է, և ով է որ կը սորվեցընէ մեզի թէ ի՛նչ է մեղքը»:

Նախ ըսեմ քեզի, Աստուծոյ արդիլած բաներն ընել կամ Անոր հրամայած բաները չընել մեղք է:

Աստուած մեզի ըսած է թէ պարտական ենք զինք սիրել մեր բոլոր սրտով և զօրութեամբ, և եթէ զինքը չսիրենք ըստ արժանւոյն, կը մեղանչենք: Աստուած մեզի հրամայած է նաեւ որ մեր ծնողքը սիրենք, անոնց հնազանդինք, ուստի և այս բաները չընել մեղք է:



Աստուած մեզի պատուիրած է դարձեալ ամենուն մարդասէր ըլլալ, եթէ այս բանիս հակառակ ընենք, մեղք կը գործենք:

Շատ բան կայ որ Աստուած մեզի արդիւած է. գողութիւն ընելու չենք, Աստուծոյ անունը պարապ տեղ բերան առնելու չենք, ուրիշի բաներուն ցանկալու չենք, և զգոյշ ըլլալու ենք որ մեր մտքերուն մէջ պարապ և յիմար խորհուրդներ չունենանք. եթէ այս բաներէն մէկն ընենք, Աստուծոյ դէմ մեղանշած կ'ըլլանք:

Աստուած է որ մեզի կը սորվեցընէ թէ մեղքն ի՞նչ է: Իր սուրբ Գիրքը տուած է այս բաները մեզի սորվեցընելու համար: Աստուածաշունչն է որ մեզ իմաստուն կ'ընէ, և մեղքին ինչ չար բան ըլլալը կը գիտցընէ: Առանց անոր շատ սգէտ պիտի մնայինք: Չէ՞ք յիշեր թէ անգամ մը Աստուածաշունչ չունեցող խեղճ և չար մարդոց վրայով պատմած եմ ձեզի”:

– “Այո, հայր, կռոց երկրպագողներուն համար ըսել կ'ուզես”:

– “Մեր վիճակն անոնց վիճակէն աղէկ պիտի չըլլար եթէ Աստուածաշունչն իբր առաջնորդ մեր ձեռքը չունենայինք: Որչափ ուրախանալու ենք որ Աստուածաշունչն ունինք, այն մեզի կ'իմացընէ թէ մեղքն ի՞նչ է”: Վերջապէս, “Դուք Աստուծոյ դէմ բնաւ չէ՞ք մեղանշեր”, հարցուց անոնց հայրը:



“Կը վախնանք թէ երբեմն կը մեղանչենք”,  
ըսին Մարիամ ու Յակոբ :

– “Եթէ Անոր դէմ մեղանչէք, ի՞նչ պիտի  
ընէ Ան”:

Տղայք այս հարցման չկրցան պատասխանել,  
ուստի փոխանակ անոնց, հայրը պատասխան  
տուաւ ըսելով, “Աստուած կամ մեզ պիտի  
պատժէ, և կամ մեզի պիտի ներէ: Եթէ մեզ  
պատժէ, այնպէս պիտի ընէ մեր մեղացը պատ-  
ժոյ արժանի ըլլալուն և մեր չապաշխարելուն  
կամ թողութիւն չխնդրելուն համար: Եւ եթէ  
մեզի ներէ, Տէր Յիսուս Քրիստոսի համար պի-  
տի ներէ”:

## ԳԼՈՒԽ ԼԷ

### ՍՍՏՈՒԾՈՅ

ԲԵՐԵՍԵՄՆ ԸԼԼԵԼՈՒ ՆՆԵՄԵՆ

“Ձեզի հասակակից աղջկան մը վրայով պատ-  
մութիւն մ’ընեմ: Այս աղջիկը երբեմն չարու-  
թիւններ կ’ընէր, և կը զգար թէ Աստուծոյ սուրբ  
օրէնքին դէմ կը մեղանչէր, ուստի շատ տխուր  
էր:

Բայց օր մը զուարթ և երջանիկ տեսնուեցաւ:  
Անոր աչքերն ուրախութեամբ կը փայլէին, և



կ'երեւար թէ անոր զգացած ուրախութիւնն  
այնչափ մեծ էր, որ չէր կրնար զայն տանել:

Մարդ մը անոր հարցուց, «Դուն որ առաջ  
այնչափ տխուր էիր, ի՞նչպէս եղաւ որ հիմա  
այսպէս ուրախ և զուարթ ես»:

«Քանզի շատ երջանիկ եմ», պատասխանեց  
աղջիկը:

«Բայց ինչո՞ւ համար շատ երջանիկ ես», նո-  
րէն հարցուց միւսը, և անկէ սա պատասխանն  
առաւ:

«Տրտում էի, քանզի զԱստուած բարկացու-  
ցած էի, բայց հիմա յոյս ունիմ թէ Աստուած  
ինձի ներած է»: Տղու մը սիրտն ուրախացընե-  
լու բաւական չէ՞ այս զգացումը թէ Աստուած  
անոր բարեկամ եղած է»:

«Այո, բաւական է», ըսաւ Մարիամ:

«Ուստի, սիրելի տղաք, դուք ալ կ'ուզէք  
Աստուծոյ բարեկամ ըլլալ: Եթէ կ'ուզէք, մի-  
միայն ճամբան սա է, Քրիստոսի պատուէրնե-  
րուն հնազանդելու է, քանզի Քրիստոս ինք  
կ'ըսէ «Ան որ իմ պատուէրներս կը բռնէ ու  
կը պահէ անոնք, անիկա է զիս սիրողը, և ան  
որ զիս կը սիրէ, իմ Հօրմէս պիտի սիրուի»:





## ԳԼՈՒԽ ԼԸ

## ԱՅՍ ԱՇԽԱՐՀՍ ՄԵՐ

## ԻՆՆԱՆՐԱՆԸ ԶԷ

«Ո՛հ, հայր, ե՞րբ տուն պիտի հասնինք»,  
ըսաւ Յակոբ, երբ օր մը հօրը հետ պտըտիլ  
ելած էր ։

Պզտիկ տղու մը համար երկայն ճամբայ էր  
անոնց այն օր գացած միջոցը . և տղան, թէեւ  
ճամբուն մէկ մասը հօրը գիրկն էր, տակաւին  
յողնած ըլլալով կ'ուզէր շուտով տուն հասնիլ ։  
«Ո՛հ, ե՞րբ տուն պիտի հասնինք», կ'ըսէր շատ  
անգամ ։

«Հիմա կը հասնինք», ըսաւ հայրը ։

«Տանը ծխնելոյզն և անոր քով եղած ծա-  
ռին գլուխը կը տեսնեմ . դուն ալ նայէ», ըսե-  
լով վեր վերցուց պզտիկ տղան, որ զանոնք  
տեսնէ ։

Յակոբ հօրը գիրկն որ ելաւ՝ ալ չուզելով  
նորէն վար իջնել, ըսաւ, «Ասանկ քիչ մը կը  
տանի՞ս զիս, հայր» ։

– «Այո մնացած ճամբան կը տանիմ, եթէ  
թեւդ ճիտիս վրայ կը դնես» ։

«Հիմա միտքս բան մը ձգեցիր», ըսաւ հայրը .  
«Հա ըսեմ քեզի . ուրիշ տուն մը կայ ուր մենք  
երկուքս ալ պիտի երթանք ։ Կը հասկընա՞ս ի՞նչ  
ըսել կ'ուզեմ այս խօսքով » ։



“Ոչ, հայր”, ըսաւ Յակոբ, “մենք ուրիշ տուն չունինք, այնպէս չէ”:

“Այո, ունինք”, ըսաւ հայրը: “Այն տունը ուր հիմա կ'երթանք, մեր մնայուն բնակարանը չէ”:

“Բայց, հայր”, պատասխանեց տղան, “մենք հոն կը բնակինք միշտ, այնպէս չէ”:

– “Այո, Յակոբ, բայց միշտ այն տանը մէջ պիտի չբնակինք”:

“Չեմ ուզեր այն տունը թողուլ”, ըսաւ Յակոբ տխուր դէմքով, “չատ զուարճալի է”:

“Բայց միշտ այս աշխարհիս մէջ պիտի չմընանք”, ըսաւ հայրը, “և մեր բնակարանը ո՞ւր պիտի ըլլայ՝ երբ ասկէ մեկնինք: Այս աշխարհս մեր մշտատեւ բնակարանը չէ: Սա մեծ ճշմարտութիւնը մի մոռնար թէ մեր մշտատեւ բնակարանը հանդերձեալ աշխարհին մէջ պիտի ըլլայ, ուր մեր հոգիները պիտի երթան երբ մեր մարմինը կը մեռնի, և հոն յաւիտեանս պիտի մնանք”:

Այս աշխարհիս բոլոր բնակողներուն համար երկու բնակարան կայ հանդերձեալ աշխարհին մէջ, մէկը շատ երջանիկ տեղ է, և երկինք կ'ըսուի. իսկ միւսը շատ թշուառ տեղ է, որուն դժոխք կ'ըսենք:

Տէր Յիսուս Քրիստոսը սիրողներուն բնակարանն երկինքը պիտի ըլլայ, ուր Քրիստոս և բոլոր արդարները կը կենան: Բոլոր անոնք ու




րոնց մեղքերը ներուած չեն՝ մեռնելէն ետքը  
իրենց բնակարանը դժոխքին մէջ պիտի գըտ-  
նեն, ուր միայն մեղք և տրտմութիւն կայ :  
Ասոնցմէ դուն ո՞րը պիտի ընտրես” :

« Անտարակոյս կ’ուզեմ որ իմ բնակարանս  
երկինքն ըլլայ », ըսաւ Յակոբ :

« Ես ալ կը հաւատամ որ այնպէս կ’ուզես », պատասխանեց հայրը : « Ուրեմն Աստուծմէ  
խնդրելու ենք որ մեզ պատրաստէ այն երկ-  
նային բնակարանն երթալու :

Անատեն այս աշխարհս մեր մշտատեւ բնա-  
կարանը չըլլալուն համար պիտի չտրտմինք ,  
միանգամայն շնորհակալ պիտի ըլլանք որ աշ-  
խարհիս մէջ այնչափ զուարճալի տեղ մը ունինք  
և մանաւանդ որ քրիստոնեայ ընտանիքի մէջ  
ենք” : Այս խօսքին վրայ տունը մօտենալով՝  
վերջացուցին խօսակցութիւնը :



## ԳԼՈՒԽ ԼԹ

### ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՐԴԻԿ

#### ՈՒ ԵՇԽԵՐՉԻ ՄԵՐԴԻԿ

« Ո՞րքան տեսակ մարդիկ կան աշխարհիս  
մէջ, հայր », ըսաւ Մարիամ զարմացմամբ, երբ  
հօրը սենեակը գիրք մ’առած, մէջը Հնդիկ-



ներուն , Ափրիկեցիներուն , Տաճիկներուն , Հրէ-  
ից և շատ ուրիշ ազգաց պատկերներուն կը  
նայէր : Մարիամ այս պատկերներուն շատ հաւ-  
նեցաւ , և նորէն ըսաւ , « Ո՛րքան տեսակ տե-  
սակ մարդիկ կան աշխարհիս մէջ , այնպէս չէ՞  
հայր » :

« Միայն երկու տեսակ կան » , պատասխանեց  
հայրը :

– « Ո՛հ , հայր , այս գրքին մէջ շատ կան ,  
երկուքէն աւելի , աղէկ գիտեմ » :

– « Քու միտքդ իմինիս համաձայն չէ : Աշխար-  
հիս մէջ եղող մարդոց , հեռու երկիր բնա-  
կողներուն , իրարու անհասկանալի լեզու խօսող-  
ներուն , զանազան հանդերձ հագնողներուն  
քանի տեսակ ըլլալը չեմ կրնար ըսել : Բայց իմ  
ըսածս սա էր թէ աշխարհիս մէջ միայն երկու  
տեսակ մարդիկ կան , ասոր վրայ կ'ուզեմ խօ-  
սիլ ձեզի :

Տեսակ մը մարդիկ կան որ զԱստուած չեն  
սիրեր , և անոր չեն ծառայեր , որոնց չար սրը-  
տերը սրբուած չեն : Այս մարդիկ Աշխարհի  
որդիք կ'ըսուին , քանզի աշխարհը և անոր մէ-  
ջի բաներն աւելի կը սիրեն քան թէ զԱստուած :

Անոնք Չարին որդիքն ալ կ'ըսուին , քանզի  
Աստուծոյ թշնամին Սատանան անոնց տէրն է ,  
ու անոնց կ'առաջնորդէ մեղք գործելու : Անոնք  
խեղճ մարդիկ են , քանզի թէեւ աշխարհը շատ  
կը սիրեն , լաւ գիտեն թէ աշխարհի մէջ միշտ



պիտի չմնան, և թէպէտ մեղքն ալ կը սիրեն, աղէկ համոզուած են թէ մեղաց պատիժը պիտի կրեն:

Աստուած անոնց վրայ կը բարկանայ ամէն օր: Միւս տեսակ մարդիկ անոնք են, որ զԱստուած կը սիրեն և անոր կը ծառայեն: Անոնց սրտերը փոխուած են, անոնք հիմա կը սիրեն այն բաները որ առաջ կ'ատէին, և այն չար բաները որ առաջ կը սիրէին՝ հիմա կ'ատեն: Այս տեսակ մարդիկ Աստուծոյ որդիքը կ'ըսուին: Աստուած զանոնք կը սիրէ, կը պաշտպանէ և կ'օրհնէ, քանի որ աշխարհիս մէջ են, Աստուած անոնց վրայ հոգ կը տանի, և երբ կը մեռնին, զանոնք երկինքը կ'ընդունի յաւիտեան երջանիկ ըլլալու:

Աշխարհիս մէջ այս երկու տեսակ մարդոցմէ զատ ուրիշ չկայ: Անոնք որ Աստուծոյ Որդիքը չեն՝ Սատանայի ու աշխարհի որդիներն են: Այս երկու ընտանիքներէն որո՞ւն մէջ դուք կ'ուզէք գտնուիլ, սիրելի զաւակներս”:

“Ես Աստուծոյ զաւակ ըլլալ կ'ուզեմ”, ըսաւ Մարիամ:

“Ես ալ նոյնպէս կ'ուզեմ”, ըսաւ Յակոբ: Մարիամն ու Յակոբայ հայրը յոյս ունէր թէ անոնք իրաւցնէ Աստուծոյ զաւակներ պիտի ըլլային:

Ինք աղօթք ըրած էր որ իր սիրելի զաւակներն Աստուծոյ ընտանիքին մէջ ընդունուին,



սուրբ և օգտակար ըլլան քանի որ այս աշխարհիս մէջ կ'ապրին, մեռնելէն ետքն ալ երկինքը երջանիկ ըլլան :

## ԳԼՈՒԽ Խ

### ՆՇՄԵՐՏՈՒԹԻՒՆ

Առտու մը երբ Մարիամ տղոց սենեակն էր լսեց որ հայրը զանի կը կանչէր, բայց շուտով չելաւ անոր երթալու : Ուստի Աննա ըսաւ անոր, « Մարիամ, չե՞ս լսեր որ հայրդ քեզ կը կանչէ » : Սակայն Մարիամ դործքը չձգեց և սենեակէն դուրս չելաւ :

Անոր այնչափ սպասելու պատճառն իր խաղալիկները ձգել չուզե՞լն էր արդեօք. տեսնենք :

« Մարիամ, Մարիամ », նորէն կանչեց հայրն աւելի բարձր ձայնով : Այս անգամ աղջիկը պատասխան տալով՝ ելաւ հօրը քով գնաց :

Հայրն անոր ձեռքէն բռնելով զանի իր սենեակը տարաւ, և քաղցրութեամբ ըսաւ անոր, « Իմ դուրս ելած ատենս դուն հոս եկա՞ր այս առտու » :

Աղջի բերան աղջիկը պատասխան չտուաւ, մէյ մը հօրը նայեցաւ, մէյ մ'ալ սենեակին բոլորտիքը, և վերջապէս աչքերը դետին տնկեց :



Եթէ կարող ըլլար այն բողոքին հայելոյ մէջ իր գէմքը տեսնել, շատ կարմրած պիտի դտնէր զանիկա, աչքերն ալ արտասուօք լեցուն :

Մարիամու հայրը քիչ մը համբերեց, քանզի չէր ուզեր իր պզտիկ աղջկան սիրտը կոտրել : Աղջիկն ալ գիտէր թէ հայրը պատասխանի կը սպասէր : Վերջապէս Մարիամ որոշեց թէ ինչ պիտի ընէր, ուստի հօրը վիզը ինկաւ և հառաչելով ըսաւ, « Այո, հայր, հոս եկայ, և այն բանը կոտորողն ես եմ, բայց միտքս զանի կոտորել չէր, հայր » : Մարիամու ըսածը ճշմարիտ էր. անիկա հոն գացած էր, մօրը և Աննային հոն չեղած ատեն : Ինք կ'ուզէր հօրը հետ խօսիլ, բայց զանի հոն չգտնելով՝ փոխանակ շիտակ ետ դառնալու, առաջ ասդին անդին նայած, ու ետքը սենեակին մէջ եղող բաները խառնելու սկսած էր :

Բաւական բարձր դարան (բճ) մը կար, որուն վրայ երկու գեղեցիկ յախճապակեայ արձաններ կային, և երբեմն հայրը թոյլ տուած էր տղոցը զանոնք իրենց ձեռքն առնել : Հիմա ալ Մարիամ խորհելով թէ որչափ զուարճութիւն պիտի ըլլար իրեն նորէն զանոնք իր ձեռքն առնել ու նայել, աթոռի մը վրայ ելաւ, և ձեռքն երկնցընելով անոնցմէ մէկն առաւ : Բայց, ավստոս, արձանն անոր ձեռքէն սահեցաւ և գետին իյնալով կոտորտեցաւ :

Յայտնի է թէ որչափ վախցաւ Մարիամ :






ուստի ցատկելով սենեակէն դուրս ելաւ, դու-  
ւը գոցեց, յուսալով թէ ոչ ոք պիտի իմա-  
նար իր հոն երթալը: Այս պատճառաւ էր որ  
հօրը կանչած ժամանակ անոր քով երթալ չու-  
ղեց, վախնալով որ թերեւս հայրը իմացած էր  
անոր ըրած յանցանքը: Արդարեւ Աստուծմէ  
զատ ոչ ոք դիտէր թէ Մարիամ հօրը սենեա-  
կը գացած էր: Հայրը կարծիքով հասկըցած  
էր բանին ինչպէս ըլլալը, և ասոր համար  
պզտիկ աղջիկը կանչեց ու այն հարցումներն  
ըրաւ անոր:

Յայտնի է նաեւ թէ որչափ դողի մէջ էր հօ-  
րը սիրտը, երբ Մարիամու դէմքէն տեսաւ ա-  
նոր սրտին խռովեալ վիճակն ու շփոթութիւնը,  
և կը խորհէր թէ արդեօք Մարիամ սուտ մը  
պիտի ըսէր՝ թէ ճշմարտութիւնը պիտի յայտ-  
նէր: Բայց ո՞րչափ ուրախ եղաւ հայրը, երբ  
ճշմարտութիւնն յաղթող երեւցաւ Մարեամու  
սրտին և բերնին մէջ:

Սիրելի զաւկին ըսածը թէ «Անիկա կոտորոզն  
ես եմ», հօրը քով աւելի արժէք ունէր քան  
թէ բոլոր աշխարհիս մէջ եղող արձանները:  
Հայրն իր պզտիկ աղջիկը պագաւ, և ասով  
յայտնեց անոր այն բանին վրայ ունեցած չա-  
փազանց ուրախութիւնը, և ըսաւ, «Այս կոտ-  
րած արձանը պիտի պահեմ իբր քու ճշմար-  
տասիրութեանդ յիշատակ մը, և երբ տեսնեմ  
զայն, պիտի յուսամ թէ Մարիամս բնաւ պի-





տի չվախնայ ճշմարտութիւնը խօսելու, հապա  
չիտակը պիտի ըսէ, թէեւ դորժած յանցանքը  
խոստովանիլ հարկ ըլլայ :

Ուրիշ բան մ'ալ ըսեմ," շարունակեց հայ-  
րը. «այս դէպքէն պիտի սորվիս այսուհետեւ  
արդիւլուած բաները չիտանել : Շատ ցաւալի  
պիտի ըլլար եթէ արձանը խառնելդ սուտ խօ-  
սելու պատճառ ըլլար քեզի, ինչպէս որ շատ  
անգամ տղոց կը պատահի» :



## ԳԼՈՒԽ ԽԱ

### Ա Ս Տ ՈՒ Ա Ծ

ՆՇՄԵՐՏՈՒԹԻՆԵՆ ԵՍՏՈՒՆՕՒ Լ :

Այն օրը որ Մարիամ արձանը կոտորեց՝ հայրն  
աղջիկն ու Յակոբ իրիկուան դէմ հետ առնե-  
լով պտըտելու ելաւ, և երեքը մէկտեղ ծա-  
ռի մը տակ նստան : Անատեն բարեսիրտ հայրը  
սկսաւ ըսել, «Մեծ Աստուծոյն՝ մեր Արարչին  
վրայով շատ բաներ ըսած եմ ձեզի . հիմա  
դարձեալ անոր վրայ պիտի խօսիմ : Անիկա  
ճշմարտութեան Աստուած է . Անոր ըսածը բո-  
լորովին ճշմարիտ է . Անոր Սուրբ Գիրքը ճշ-  
մարտութեան գիրք է . Սուրբ Գիրքին մէջ  
զԱստուած սիրողներուն և Անկէ վախցողնե-



րուն համար մեծամեծ խոստմունքներ կան, ամէնքն ալ ճշմարիտ են և Աստուած ամէն մէկը պիտի կատարէ :

Երբ Աստուծոյ խոստմունքները կը կարդանք, կամ կը լսենք, խորհելու ենք թէ արդեօք մեզի համար են անոնք թէ ոչ : Եթէ մեզի համար են, ուրախանալու ենք որ ամէնքն ալ պիտի կատարուին :

Երբ Աստուծոյ սպառնալիքը կը կարդանք կամ կը լսենք, վախնալու ենք որ չըլլայ թէ մեզի դէմ եղած ըլլան անոնք, և աղօթելու ենք Աստուծոյ որ մեր մեղքերը ներէ իր սիրելի Որդւոյն համար, և այսպէս այն սպառնալիքը կրելէն ազատէ մեզ :

Աստուծոյ ժողովուրդները ճշմարտութիւնը կը սիրեն, և չեն համարձակիր սուտ խօսիլ :

Աստուած շատ կը բարկանայ ստախօսներուն, սուտ շրթունքները կ'ատէ, և ստախօսները պիտի պատժէ : Շատ անգամ այս աշխարհիս մէջ կը պատժէ զանոնք, և անշուշտ հանդերձեալին մէջ ալ նոյնպէս պիտի ընէ . քանզի ինքքն ըսած է թէ ամէն սուտ խօսողներուն բաժինը դժոխքը պիտի ըլլայ : Իմ սիրելի զաւկըներս, պիտի չյիշէ՞ք այս բաներն և միշտ 'ի սրտէ ճշմարտութիւնը պիտի խօսի՞ք :

Ձեր երկնաւոր Հօրն աղօթեցէք, որ իր Սուրբ Հոգւովը ձեզի օգնէ այնպէս ընելու” :



## ԳԼՈՒԽ ԽԲ

Ի Ն Չ Բ Ա Ն Ի Հ Ս Մ Ս Ր

ԵՂՕԹԻՅ ԸՆԵՂՈՒ ԵՆԻ

«Աստուածաշունչին մեծ ճշմարտութիւններու մէկն ալ պիտի ըսեմ ձեզի, և անկէ ետքը տուն դառնանք», ըսաւ տղոց հայրը: «Կրնա՞ք մէկ երկու ըոպէ ալ հանդարտ նստիլ»:»

Մարիամ ու Յակոբ պատասխան տուին, «Կ'ուզենք քիչ մ'ալ քովդ նստիլ, և խօսքերդ մտիկ ընել»:

«Դուք գիտէք աղօթք ի՞նչ ըսել է, այնպէս չէ՞», ըսաւ հայրը: «Աղօթք ընել՝ Աստուծոյ հետ խօսիլ, մեր կարօտութիւններն Անոր պատմել, անոր օրհնութիւնը և ամէն մեզի պէտք եղած բաները Անկէ խնդրել է»:

«Այո, գիտենք ատիկա», ըսին Մարիամ ու Յակոբ:

«Դարձեալ գիտէք թէ աղօթքի ժամանակ զգոյշ ըլլալու և մեր ըսածին վրայ աղէկ խորհելու ենք, և արտորալու չենք. նաեւ, երբ Աստուծոյ հետ կը խօսինք մեր միտքերն ուրիշ բանի տալու չենք», ըսաւ հայրը:

Մարիամ ու Յակոբ ատիկա գիտէին:

«Ուստի», ըսաւ հայրը, «քանի մը բան ալ



պիտի ըսեմ, զորս ամէն օր աղօթքով խնդրելու ենք :

Աստուծմէ խնդրելու ենք որ հաճի մեզ առողջ պահել և կերակրել : Պէտք է որ այս բաներն Աստուծմէ խնդրենք, քանզի Սն միայն կարող է զանոնք մեզի տալ : Զանոնք ընդունելէն ետքն ալ, չմոռնանք շնորհակալ ըլլալ Աստուծոյ մարդասիրութեանը համար որ մեզի այնչափ բարիքներ տուած է այս աշխարհիս մէջ : Աղաչենք Աստուծոյ որ մեզի օգնէ իր կամքին հնազանդելու, այնպէս որ եթէ հաճի մենէ վերցընել մեր առողջութիւնը կամ հանգըստութիւնը, և կամ խնդրուած բան մը չըտալ, որ գիտէ թէ մեզի համար օգտակար չէ, կարող ըլլանք ըսել, « Բու կամքդ ըլլայ » : Յիշենք նաեւ մեր սիրելի բարեկամներն, և Աստուծմէ խնդրենք որ օրհնէ զանոնք, և հարկաւոր բարիքը տայ անոնց :

Խնդրենք նաեւ մեր երկնաւոր Հօրմէն որ մեր յանցանքները ներէ իր սիրելի Որդւոյն համար, որ աշխարհ եկաւ մեղաւորները փրկելու. և եթէ միտք բերենք թէ չար բան մը ըրած, ըսած կամ խորհած ենք, խոստովանելու, և Աստուծմէ օգնութիւն խնդրելու ենք, որ կարող ըլլանք ուրիշ ժամանակ այսպիսի բաներ չընել :

Մենք չենք կրնար իրօք զղջալ կամ սրտանց տրտմիլ մեր մեղքերուն համար՝ առանց Աստու-



Ժոյ Սուրբ Հոգւոյն օգնութեանը, ուստի բնաւ մոռնալու չենք Աստուծմէ Սուրբ Հոգին խնդրել, որ օգնէ մեզի սրտանց զղջալու և ապաշխարելու, և որ մեզ սուրբ պահէ:

Հիմա բուն ըսելու բանս այս մեծ ճշմարտութիւնն է: Աստուած խոստացած է Սուրբ Հոգին տալ իրմէ խնդրողներուն:

Ո՛րչափ բարերար է Աստուած մեզի: Ս.մենէն բարի ծնողքէն աւելի բարերար է: Ս.նիկա աւելի կու տայ մեզի քան զոր մենք աղօթքի մէջ կը խնդրենք: Չեզի պէս փոքր տղայք անգամ կրնան Աստուծմէ Սուրբ Հոգին խնդրել, և եթէ սրտանց խնդրէք, ձեր խնդրուածքը պարապ պիտի չերթայ:

## ԳԼՈՒԽ ԽԳ

### ԵԼՆԱՆԵՐԸ

Ամբողջնէ ետքը աշուն կուգայ: Աշնան օրերն ամարուան օրերուն պէս երկայն չեն և այն ատենները Մարիամ ու Յակոբ չէին կրնար իրիկունները դուրս ելլել պտըտելու, հապա շատ անգամ առտունները դուրս ելլելով, երբեմն ըլլուրը, ձկնորսներուն տունները և ծովեզերք կ'երթային, երբեմն գերեզմանատունէն անց





նելով դաշտերը  
 կ'երթային : Այս  
 դաշտերուն մէջ  
 շատ զուարճալի  
 բաներ կը տեսնէին,  
 զորօրինակ, գեղա-  
 ցիներու տուններ, կալերու վրայ ցորենի դէզեր,  
 արտերու մէջ մանգաղներով ցորեն հնձողներ,  
 և նոր կապուած որաներու մէջ խաղացող տը-  
 ղայք : Այս տեսարանը բոլորովին տարբեր էր



անկէ զոր Մարիամ և Յակոբ առաջ հոն տեսած էին գարնան եղանակին :

Առաջ տեսած էին ցորենի արտերը , երբ հասկերը բողբոջելու կը սկսէին . իսկ հիմա ցորենը ժողվուած , արտերէն վերցուած և կալերու վրայ դրուած կը տեսնէին :

Առաջ տեսած էին իրենց պարտէզին մէջ եղած պտղաբեր ծառերուն ծաղկիլը , հիմա նոյն ծառերուն անոյշ պտուղները կը վայելէին :

Միայն խնժորի ծառերուն վրայ պտուղ մնացած էր , և ան ալ գրեթէ քաղուելու մօտ էր : Արդէն աշունն էր , երբ Մարիամու հօրը աշնանային ընծայ մը եկաւ , այսինքն ելակի (վէկ) քանի մը տունկ : Մարիամու հօրը բարեկամներէն մէկը դրկած էր ասոնք պարտէզը տնկուելու համար : Այս տեսակ ելակէն քիչ կը դրտնուէր և շատ ալ գեղեցիկ էր , ուստի և հայրը շատոնց կը փափաքէր անկէ քանի մը տունկ ունենալ իր պարտէզին մէջ :

« Շատ խնամք տանելու ենք ասոնց » ըսաւ հայրը իր պզտիկ աղջկանը , որ քովը կայնած էր՝ զանոնք առած ժամանակը : « Ասոնք զատ տեղ մը տնկենք և դալ ամառ , եթէ ողջ մնանք , թերեւս ծիրանի (գայեփ) չափ ելակ պիտի տեսնենք անոնց վրայ » : Ամէնը տասներկու տունկ էին , և պարտէզին մէջ անոնց համար պատրաստուած առանձին տեղ մը տնկուեցան :

Աշունն անցաւ , ձմեռը եկաւ , բայց ուշ և



ցուրտ : Տուճկերուճ վեց հատը փտտած էին ,  
միւս վեց հատն ալ շատ պղտիկ և տկար մնա-  
ցած էին : Երբ ելակին ծաղկելու ժամանակն  
եկաւ , տուճկերէն միայն մէկ հատը ծաղիկ բա-  
ցաւ ան ալ միայն չորս ծաղիկ :

“ Այս գեղեցիկ և մեծ տեսակէն քիչ ելակ  
պիտի ունենանք այս տարի ”, ըսաւ հայրը , երբ  
տղոց հետ պարտէզը կը պտըտէր , “ բայց կը  
յուսամ թէ չորս հատ պիտի ունենանք . ուս-  
տի մէկը ձեր սիրելի մօրը , մէյ մէկ հատ ձե-  
զի , չորրորդն ալ ինծի պիտի ըլլայ ” : Այնու-  
հետեւ Մարիամ ու Յակոբ ամէն օր կը նայէին  
այս տուճկին : Անոնց կը թուէր թէ ելակները  
շատ ուշ կ'ելլէին . բայց վերջապէս ծաղիկները  
թափեցան , և չորս ելակ տեսնուեցաւ :

Ասոնք օրէ օր կը մեծնային . բայց , ո՛հ , ո՛ր-  
չափ ժամանակ տեւեց մինչեւ որ հասան :

Հայրն ըստ կարի ելակները կը պաշտպանէր  
թռչուններէն և խիտունջներէն ( « ակնիկօղ » ) , օր  
մ'ալ , ըսաւ , “ կարծեմ շաբաթէ մը հասած  
ելակ կը ժողվենք . քանզի շատ մեծցած են ” :  
Այնչափ մեծ ելակ բնաւ տեսած չէր Մարիամ ,  
և շատ անգամ հայրը հոն տարած էր զանոնք  
ցուցընելու : Ելակները հասած ատեն՝ օր մը  
երբ անոնք նայելու կ'երթային , հայրն ըսաւ  
տղոց , “ կարծեմ թէ վաղը կրնանք քաղել ե-  
լակները ” : Հետեւեալ օրը հայրը մինակ պար-  
տէզ դնաց այն չորս գեղեցիկ ելակները քաղե-



լու, բայց տեսաւ որ բան մը մնացած չէր: Երբ տուն դարձաւ, հոն տիկին մը տեսաւ, որ Մարիամու ու Յակոբայ մօրը տեսութեան եկած էր: Հայրը ելակներուն համար զգացած տըրտմութիւնն այս տիկնոջ պատմեց:

«Ո՛հ», ըսաւ տիկինը, «չեմ զարմանար ատոր, թերեւս քու պզտիկ զակներդ գիտեն ելակներուն ուր ըլլալը: Տղայք պտուղ շատ կը սիրեն, ուստի և աղէկ բան մը չէ զանոնք մինակ պարտէզը թողուլ պտուղներուն հասուն ատենը. անտարակոյս ամէն բան կը խառնեն, և այնպիսի պտուղներ կ'ուտեն զոր պէտք չէ ուտել»:

«Ես չեմ կարծեր թէ Մարիամ ու Յակոբ այն ելակները կերած են», ըսաւ հայրը, «բայց հիմա կ'իմանանք»:

Իսկոյն զանգակը զարկաւ, և երբ սպասաւորը եկաւ, հրաման ըրաւ անոր Մարիամն ու Յակոբը կանչել: Երբ անոնք սենեակը մտան, հայրը հարցուց, «Ս.յն չորս մեծ և գեղեցիկ ելակները դո՞ւք քաղեցիք ու կերաք»:

«Ոչ, հայր», պատասխանեցին երկուքն ալ:

«Ես ձեզի կը հաւատամ սիրելի տղաքս», ըսաւ հայրը, «բայց կը ցաւիմ ըսել որ, մէկը այն ելակներն առնելով 'ի դերեւ հանեց մեր յոյսը զանոնք վայելելու»:

Մարիամ ու Յակոբ շատ ցաւեցան, երբ սոսր բանը լսեցին, բայց անոնց հօրը «Ձեզի կը հա-



ւատամ” ըսելը, զանոնք մխիթարեց :

Ո՛հ, եթէ պզտիկ տղայք դիտնային թէ ո՛րչափ զուարճութիւն պիտի զգան երբ իրենց խօսքը միշտ ճշմարիտ բռնուէր, անտարակոյս միշտ ճշմարիտ պիտի խօսէին :

«Շատ աղէկ», ըսաւ հայրը, «ես կ'ուզէի միայն այս հարցումն ընել ձեզի : Ուրախ եմ որ ձենէ այս պատասխանը լսեցի, հիմա կրնաք երթալ” :

Երբ տղայք դուրս ելան, անոնց հայրն այն տիկնոջը դառնալով «Մարիամ ու Յակոբ ան ելակներն առած չեն», ըսաւ :

Տիկինը բան մը չըսաւ, բայց կ'երեւար թէ չէր հաւատար որ տղայք այն պտուղը առած չէին : Քանի մ'օր ետքը հայրն իմացաւ թէ ո՛վ առած էր ելակները, և յայտնի եղաւ որ ստուգիւ Մարիամ և Յակոբ դպած չէին անոնց :

Ասիկա օգտակար դաս մ'եղաւ այն տղոց ճշմարտութեան մեծ արժէքը սորվելու : Եթէ անոնց հայրն չդիտնար թէ անոնք ճշմարտախօս են, կրնար կասկածիլ թէ պտուղներն անոնք առած էին՝ թէեւ անոնք բացարձակապէս ժխտէին. քանզի ստախօսներուն չենք հաւատար՝ թէեւ երբեմն ճշմարիտ խօսին :

Մարիամու և Յակոբայ հայրը նոյն տիկնոջ տունը հանդիպելով, իմացուց ելակները դողցողը որ ոչ Մարիամ էր և ոչ Յակոբ :



## ԳԼՈՒԽ ԽԴ

Ժ Ո Ղ Ո Վ Ա Ն Տ ՈՒ Ն

Այս դէպքէն քանի մ'օր ետքը Մարիամու  
և Յակոբայ հայրն ու մայրը զանոնք իրենց հետ  
առնելով՝ ուրիշ քաղաք մը գացին քանի մը մը  
ղոն հեռու, հոն ազգականի մը տուն շաբաթ  
մը կենալու :

Եթէ ժամանակ ունենայի, կրնայի պատմել  
ձեզի թէ ինչպէս Մարիամ ու Յակոբ իրենց  
օրերը հոն կ'անցնէին, թէ ինչ նոր տեսարան  
ներ կը տեսնէին, և ինչ նոր ճշմարտութիւն  
ներ կը լսէին. բայց հիմա քանի մը վրայ միայն  
պիտի խօսիմ :

Այն քաղաքին մէջ ժողովատուն ըսուած մեծ  
տուն մը գացին, ուր շատ բազմութիւն կար :  
Սրահին (սալ) ծայրը մեծ տախտակամած (տեօ-  
շէֆ) մը կար, որ միւս տեղերէն քիչ մը բարձր  
էր, և ուր քանի մը մարդիկ նստած շատ զբաղ-  
եալ կ'երեւային :

Ոմանք իրենց ձեռքը գիրք և ոմանք ալ  
թուղթեր ունենալով կարգաւ ստք կ'ելլէին և  
բարձր ձայնով կը խօսէին : Գետնի վրայի մեծ  
բազմութենէն ալ ոմանք նստած և ոմանք ոտ-  
քի վրայ, ու շաղրութեամբ մտիկ կ'ընէին այն  
բարձր տեղը կեցող մարդոց ըսածները :



Մարիամ ու Յակոբ անոնց ըսածները լաւ չէին հասկնար, բայց իրենց տեղէն կրնային տեսնել գրեթէ բոլոր մարդիկ, որ այն մեծ սրահին մէջ էին: Ուստի չէին ձանձրանար իրենց հօրն ու մօրը հետ հօն կենալէ, թէեւ աւելի քան երեք ժամ հօն մնացին:

Վերջապէս խօսողներն իրենց խօսքը լմացուցին, և յետոյ կամաց կամաց ժողովն արձակուեցաւ, և Մարիամ ու Յակոբ և անոնց ծնողքըն իրենց ազգականին տունը դարձան:

«Ո՛րչափ մարդ կար այն մեծ սրահին մէջ», ըսաւ պզտիկ աղջիկը:

«Այո, շատ», պատասխանեց հայրը, «սրահը լեցուն էր, շատ մարդիկ ալ՝ որ չէին կրնար ներս մտնել, դուրսը կեցած էին: Անոնք ի՞նչ պատճառաւ հօն ժողվուած էին, գիտէ՞ք»: Մարիամ կը կարծէր թէ ճառ մտիկ ընելու եկած էր այն լազմութիւնը:

«Այո, այնպէս էր», ըսաւ հայրը, «և ճառ խօսողներն ի՞նչ բանի վրայ խօսեցան, գիտէ՞ք»:

Մարիամ քանի մը բան ըսաւ, զոր լսած և միտքը պահած էր: Հայրը հասկցաւ որ աղջիկը մտիկ ըրած էր, թէեւ ըսուածներուն մեծ մասը չէր հասկըցած, և թէ Յակոբն ալ նոյնպէս քիչ շատ բան լսած էր:

«Ուրեմն այս բաներուն վրայով խօսիմ ձեզի», ըսաւ հայրը. «եթէ դուք քանի մը տարի աւելի ողջ մնաք, և այնպիսի տեղ մը երթաք,



դուք ալ ձեր լսածներն ինծի պիտի պատմէք :  
Գիտէք թէ ես շատ անգամ կը պատմէի ձե-  
զի այն երկիրներուն վրայով, որոնց խեղճ և  
տղէտ բնակիչները ճշմարիտ Աստուածը չեն  
ճանչնար, այլ կը պաշտեն սուտ աստուածներ,  
կամ փայտէ և քարէ շինուած կուռքեր որ  
մարդու օգուտ չեն կրնար ընել”:

Մարիամ ու Յակոբ մուցած չէին ասիկա :  
«Աստուած իր Սուրբ Հոգւոյն շնորհքովը, բա-  
րի մարդոց սրտերուն մէջ սա խորհուրդը դրաւ»,  
շարունակեց հայրը, «որ այն խեղճ ու տղէտ  
կուսպաշտներուն ողորմին, և ջանք ընեն անոնց  
ճշմարտութիւնը սորվեցընելու : Ոմանք իրենց  
հայրենիքէն ելլելով հեռի երկիրներ դացին,  
և այն խեղճ մարդոց լեզուները սորվելով Աս-  
տուածաշունչը և ուրիշ գիրքեր անոնց լեզուով  
տպել տուին, և ամէն կերպով, որչափ հնար  
էր, շատ բան սորվեցուցին անոնց ճշմարիտ Աս-  
տուծոյ վրայով, զոր օրինակ թէ ինչպէս Ան  
իր սիրելի Որդին աշխարհը զրկեց մեղաւոր-  
ները փրկելու : Այս քարոզիչները Միսիոնար  
կ’ըսուին : Կան մարդիկ ալ, որ հեռի երկիր-  
ներ չեն երթար, այլ իրենց հայրենիքը մնա-  
լով ըստ կարի կ’աշխատին այս գործը յառաջ  
տանելու : Ստակ կուտան Միսիոնարներ զրկե-  
լու, Աստուածաշունչը և ուրիշ օգտակար գիր-  
քեր տպելու . իւրաքանչիւր մարդ այս կերպով  
մէյմէկ բան կրնայ ընել . մարդ մինչեւ ան-



դամ դահեկան մը տալով կրնայ օգնել Աստուծոյ գիտութիւնը տգէտներուն զրկելու գործին :

Ձեզի պէս փոքր տղայք անդամ կարող են օգնութիւն ընել այս բարի գործին :

Ամէն բարեպաշտ մարդ, թէ իր հայրենիքը մնայ, թէ օտար երկիր երթայ, թէ շատ ստակ ունենայ տալու և թէ քիչ, կրնայ աղօթք ընել և Աստուծոյ օրհնութիւնը խնդրել, որ խեղճ հեթանոսներն իրենց չար ճամբաներէն ետ կենալով՝ դարձի գան և Տէր Յիսուս Քրիստոսը սիրել և անոր պատուիրանքը պահել սորովին :


Շատ ժամանակ կայ որ առաջին անգամ Միսիոնարք օտար երկիրներ գացին : Անոնք մեռան, բայց ուրիշներ անոնց տեղը կը հասնին, և ամէն տարի շատ ուրիշներ ալ կ'երթան : Բան մը պիտի ըսեմ ձեզի որ պիտի ուրախացընէ զձեզ : Աստուած օրհնեց այս մարդոց գործը և անոնց միջոցով շատ հեթանոսներուն մեծ շնորհքներ տուաւ : Ատենօք այս հեթանոսները տգէտ և չար էին, բայց Աստուած անոնց սիրտը փոխեց, երբ անոնք լսեցին անոր սուրբ խօսքը որ կարող է զմարդիկ իմաստուն ընել փրկութեան :

Հիմա խօսիմ ձեզի այն բազմութեան վրայ որ այսօր տեսանք : Այն ատենաբաններէն ումանք, որոնց խօսքերը լսեցիք, Քարողիչ չէին, բայց ամէնքը կը խօսէին հեթանոսներուն խեղ



ճուրթեանը, և Աստուծոյ մարդասիրութեանը վրայ, թէ ինչպէս Աստուած արթնցուց բարի մարդիկ երթալ հեթանոսներուն քարոզել : Պատմեցին նաեւ այն մեծ օգուտները որ ամենակարող Աստուծոյ օրհնութեամբն արդէն եղած են : Այն սրահին բազմութիւնը հոն եկած էր յատկապէս այս բարի լուրերը լսելու, և տարակոյս չունիմ թէ անոնց լսած բաները մեծ ուրախութիւն տուաւ անոնց : Անոնցմէ շատերը ստակ տուած են այս գործին յառաջացմանը համար, և կը յուսամ թէ աղօթքով պիտի խնդրեն Աստուծմէ որ օգնէ Միսիոնարաց, խեղճ և մեղաւոր հեթանոսներուն ալ իր Սուրբ Հոգին տայ որ անոնք իրենց սրտերը Յիսուսի Քրիստոսի սիրոյն դարձնեն :

Աստուած խոստացած է այսպիսի աղօթքները լսել, և իր Սուրբ Գիրքին մէջ ըսած է մեզի թէ ժամանակ պիտի գայ որ երկիրը Տէրօջը գիտութեամբը պիտի լեցուի, ինչպէս որ ջուրերը ծովը կը ծածկեն” :



## ԳԼՈՒԽ ԽԵ

ԴԵՏԵՍԵՆԻ ՄԵՆՕ ՕԲԸ

“Մեր դացած ժողովատան սրահը շատ մեծ էր” նորէն ըսաւ Մարիամ հետեւեալ օրը,



«այնչափ մեծ սրահ երբէք տեսած չէի: Հոն մարդ կը բնակի»:

«Ոչ, այն սրահին շինուելու մէկ նպատակն ըսեմ ձեզի», պատասխանեց հայրը:

«Գիտէք որ երկրիս մէջ գողութիւն մարդասպանութիւն և ուրիշ չարութիւն ընող գէշ մարդիկ կան»:

«Այո, գիտենք հայր», ըսաւ Յակոբ, «դեռ անոցած շարաթ մեր խնձորները պարտէզէն գողցուեցան. աղէկ գիտեմ որ զանոնք գողցողները բարի մարդիկ չէին»:

«Անտարակոյս այնպէս է, Յակոբ», ըսաւ հայրը, «քանզի բարի մարդիկ գողութիւն չեն ըներ»:

Երբ գողերուն և ուրիշ չար մարդոց չարութիւնը կ'իմացուի, ընդհանրապէս անոնք բռնուելով բանտ կը դրուին»:

«Բայց, հայր, այն սրահը բանտ է», հարցուց Մարիամ:

«Ոչ», ըսաւ հայրը, «այն սրահին վրայ քիչ մը ետքը պիտի խօսիմ: Այս չարագործները բանտ կը դրուին, և կը պահուին մինչեւ որ դատաւորը քաղաք կու գայ. և անատեն որոշեալ օր մը», — հոս Մարիամ իր հօրը խօսքը ընդմիջելով հարցուց, «Դատաւորը ո՞վ է, հայր»:

— «Դատաւորը, սիրելիս, մարդ մըն է, որուն իշխանութիւն տրուած է այն մարդիկը քննել



որոնց համար կ'ըսուի թէ երկրին օրէնքներուն  
դէմ գործած են, և իմանալ թէ անոնց վրայ  
եղած ամբաստանութիւնն իրա՛ւ է թէ ոչ: Այս  
դատաւոր կոչուած մարդն այն մեծ սրահը կը  
մտնէ, և նստելով այն բարձր աթոռին վրայ  
զոր սրահին ծայրը տեսար՝ իր քննութիւնները  
կ'ընէ. ուրիշ մարդիկ ալ կ'օգնեն անոր այն  
քննութեան ատենը, և երբ ամբաստանեալները  
քննողներուն առջեւը մի առ մի կը բերուին,  
քննիչներն անոնց թէ 'ի նպաստ և թէ հակա-  
ռակ տրուած վկայութիւնները մտիկ կ'ընեն,  
և ամբաստանեալը կ'արձակուի, եթէ անոր  
յանցանքը չհաստատուի. բայց երբ կը ստուգ-  
ուի թէ երկրին օրէնքներուն դէմ գործած է,  
դատաւորը հրաման կ'ընէ ըստ օրինաց պատժել  
այն մարդը:

Սիրելի աղջիկս, կ'ախորժի՞ս դատաւորի մը  
առջեւ կենալ և չարութեան համար քննուիլ՞:


«Ոչ, ոչ», ըսաւ Մարիամ:

— «Սիրելի տղաքս, գիտէ՞ք արդեօք որ օր մը  
դատաւորի մը առջեւ պիտի կայնիք՞»:

«Ո՛հ, հայր», գոչեց Յակոբ:

«Ճշմարիտ կ'ըսեմ», ըսաւ հայրը: «Մահա-  
Ստուածաշունչին խօսքը, որ ինչպէս գիտէք,  
ճշմարիտ է, Սմենքս ալ Քրիստոսի ատեանին  
առջեւը պիտի կայնինք՞»:

Դուք, սիրելի տղաքս, հոն պիտի ըլլաք,  
ձեր ծնողքը և աշխարհիս բոլոր բնակիչներն






ալ հոն պիտի ըլլան : Այն բազմութիւնը որ երէկ  
տեսաք, մեծ երեւցաւ ձեզի, բայց, ո՛հ ի՛նչ  
մեծ ժողովք պիտի ըլլայ հապա այն, երբ բո-  
լոր մեռելները յարութիւն առնելով ֆրիստոսի  
աթոռին առջեւը դան դատուելու : Անատեն  
այս աշխարհիս մէջ մեր բոլոր ըրածները, ըսած-  
ները և խորհածները մեր առջեւ պիտի դրուին :

Անատեն բոլոր մարդիկ երկու մեծ խումբ  
պիտի բաժնուին . մին Աստուծոյ ժողովրդեան,  
և միւսը Սատանային ժողովրդեան խումբը՝ այ-  
սինքն անոնք որոնց մեղքերը ներուած են, և  
անոնք որ անասլաշխար մեռած են : Աստուծոյ  
ժողովուրդը դատաւորին աջ կողմը պիտի կե-  
նայ, իսկ Սատանայինը՝ ձախ կողմը :

Այնուհետեւ Տէր Յիսուս ֆրիստոս աջակող-  
մեաններուն պիտի ըսէ . « Եկէք, իմ հօրս օրհ-  
նածները, աշխարհի սկիզբէն ձեզի համար պատ-  
րաստուած թագաւորութիւնը ժառանգեցէք՝  
և անոնք երկինքը պիտի ընդունուին՝ փառօք  
և երջանկութեամբ յաւիտեան հոն կենալու :

Յետոյ դատաւորն ձախակողմեանց դառնա-  
լով պիտի ըսէ, « Մէկդի գացէք ինծմէ, անի-  
ծեալներ, յաւիտենական կրակին մէջ, որ պատ-  
րաստուած է Սատանային՝ և իր հրեշտակնե-  
րուն՝, և անոնք դժոխք պիտի երթան, ուր  
միայն ցաւ ու տրտմութիւն պիտի ըլլայ յաւի-  
տեանս յաւիտենից :


Ասոր վրայով պիտի մտածէ՞ք, սիրելի տղաքս :





և ամէն օր աղօթքով Տէր Յիսուսի պիտի երթա՞ք և ձեր մեղքերը խոստովանելով պիտի խնդրէ՞ք որ Ան ձեր մեղքերը ներէ և ձեր բարեկամն ըլլայ հիմա և միշտ” :

Այս բաներն ըսելէն ետքը՝ Մարիամ ու Յակոբ շատ կը մտածէին : Ընթերցող, դուն ալ այս գիրքին մէջ բացատրուած աս և ասոր նման ուրիշ մեծամեծ ճշմարտութիւններուն վրայ չե՞ս մտածեր : Դուն ալ Աստուծմէ շնորհք խնդրէ որ հաւատքով արդարացած և ֆրիստոսի արեամբը սրբուած ըլլալով դատաստանի այն մեծ օրը դատաւորը քեզի բարեկամ դտնես :





## ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

ԳԼՈՒԽ	ԵՐԷ՝
Ա. Յակոբ Մարիամ և անոնց հայրը . . . . .	1
Բ. Աստուծոյ և Անոր բարերարութեանը վրայ Յ . . . . .	3
Գ. Ծաղիկը և անոր սերմը . . . . .	4
Դ. Աստուած ամէն բան ստեղծեց . . . . .	7
Ե. Ընթերցարանը . . . . .	9
Զ. Հրեշտակներուն վրայ . . . . .	10
Է. Ընթերցարանին մէջ եղած ուրիշ խօսքերը . . . . .	13
Ը. Աստուծոյ իմաստութեանը վրայ . . . . .	15
Թ. Բլուրն ու ծովը . . . . .	16
Ժ. Աստուած ամէն տեղ է . . . . .	18
ԺԱ. Կուռքը . . . . .	20
ԺԲ. Աստուած սուրբ և արդար է . . . . .	22
ԺԳ. Տղան ու ձին . . . . .	24
ԺԴ. Աստուած բարի է չարերուն անդամ . . . . .	26
ԺԵ. Սուրբ Գիրքը . . . . .	28
ԺԶ. Բոլոր մարդիկ մեղանչելու հակամէտ սրտով ծնած են . . . . .	30
ԺԷ. Աստուած մարդը սուրբ ստեղծեց . . . . .	32
ԺԸ. Պզտիկ մեղք չկայ . . . . .	34
ԺԹ. Գերեզմանատունը . . . . .	35
Ի. Պէտք է որ մեղքը պատժուի . . . . .	38
ԻԱ. Ճշմարտութիւններուն ամենէն լաւը . . . . .	40
ԻԲ. Փուշէ պսակը . . . . .	42



ԳԼՈՒԽ

ԻԳ. Պզտիկ տղոց հրաման կայ Քրիստոսի Հր  
 թալու . . . . . 44

ԻԴ. Ծննդեան տարեդարձը . . . . . 47

ԻԵ. Փոթորիկ մը . . . . . 49

ԻԶ. Վտանդը մեզ մեր պարտաւորութիւնը  
 կատարելէ ետ պահելու չէ . . . . . 51

ԻԷ. Տղայոց հայրն ապահով կը դառնայ . . . 53

ԻԸ. Ծովեզերք . . . . . 55

ԻԹ. Չկնորսներուն վտանգի մէջ իյնալը . . 57

  Լ. Շնորհակալութիւն . . . . . 60

ԼԱ. Աստուծոյ քաղցրութիւնը մեզ ապաշ  
 խարութեան կ'առաջնորդէ . . . . . 64

ԼԲ. Ապաշխարութիւնն ի՞նչ է . . . . . 66

ԼԳ. Յիսուս Քրիստոս ամէն բանի տէրն է . 67

ԼԴ. Կռուասէր տղայք . . . . . 69

ԼԵ. Կռուիլը ու ծեծկուիլը շատ դէշ բա  
 ներ են . . . . . 72

ԼԶ. Մեղքն ի՞նչ է . . . . . 75

ԼԷ. Աստուծոյ բարեկամն ըլլալու ճամբան 78

ԼԸ. Այս աշխարհս մեր բնակարանը չէ . . . 80

ԼԹ. Աստուծոյ մարդիկ ու աշխարհի մարդիկ  
 Խ. Ճշմարտութիւն . . . . . 85

ԽԱ. Աստուած ճշմարտութեան Աստուած է 88

ԽԲ. Ի՞նչ բանի համար աղօթք ընելու ենք 91

ԽԳ. Ելակները . . . . . 93

ԽԴ. Ժողովատուներ . . . . . 98

ԽԵ. Դատաստանի մեծ օրը . . . . . 102



ԱՌՅ ՅՈՎՀԱՆՆԻՄԵԱՆ  
1960  
ՆՈՐ - ԶՈՒՋԱ


Գ



5001

THE UNIVERSITY OF CHICAGO  
1960  
THE EAST ASIAN LIBRARY











ՀՀ Ազգային գրադարան



NL0004120



